


3203



1920

Արական ՄԱՍՆԻՑԻ

թիվ 1

ՏՊԹ. Ա. ՔԱՐԼ

(177)

ԶԵՐՄԱՄԻԶՈՒԹԵԱ

(ՊԵԼ ՍՈՂՈՒԳԼԵՎԸ)

ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ



ԹԱՐԳՄ. ՀԱՐՑՈՒԿ



12002

616.9
լ-30

Գ. ՊՈԼԻԽ
Ռ. "Արմեն" — ՊԱՍԱ ԱԼԻ

1930

2010

24319-42

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՇՈՒԽԴՆԵՐ

ԶԵՐՄԱՄԻՉՁԹԵՆԵԼ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Սովորաբար, այս տեսակ երկասիրութիւններու մեծ մասին մէջ հատորին վերջը կը խօսին նախադգուշական այն իմաստուն խորհուրդներուն վրայ, զոր խորհրդածութիւնը և փորձառութիւնը կը թելագրեն իրենց հեղինակներուն։ Իմ կարծիքովս, սխալ է ։ Շատ կարեւոր է այս զլուիքը, և ըսթերցողը լարուած ու շաղրութեամբ հետեւելու է անոր, պէտք է լաւ ըմբռնէ կարգացածը ու երկարօրէն խորհի անոր վրայ։ Ահա ինչո՞ւ համար նախազգուշական միջոցներուն վրաց կը խօսիմ ամենէն առաջ, մաղթելով որ իմ երիտասարդ ընթերցողս իրազեկ ըլլայ, սեռային ձախողուած մը չունեցած։ Իմ պարզելիք ծանօթութիւններէս ու մանք կանխարգել ու առողջապահական պիտի ըլլան, ուրիշներ՝ ներողամիտ բարոյականով մը տոգորուած։ ընթերցողը պիտի կրնայ օգտակար ծանօթութիւններ քաղել, և ատ է որ իմ չքմեղացումս պիտի ըլլայ։

Հետեւաբար, կը պահանջեմ որ վասահութիւն ունենան ըսելիքներուն վրայ։ Սեռային յարաբերութիւններէն առաջ, նոյն միջոցին ու ետքը ձեռք առնուելիք զգուշական միջոցները տափակօրէն թուելով չպիտի բաւականանամ, այլ խնդիրը աւելի խորապես պի-



3322-55

տի ուսումնասիրեմ և պրատեմ, թէ ինչո՞ւ համար ջերմամիզութիւնը այնքան յաճախագէալ դարձած է, հակառակ անոր որ զգուշական միջոցները չառ դիւրին են:

“Աւելի դիւրին է կանխատեսելը քան թէ բուժումը, ըստ են: Մասամբ միայն ճշմարիտ է աս: Այդ զգուշութիւնը բնական և պարզ կը թուի ծերուկ վարպետին, որ աշխատութեան լոիկ ունեակին մէջ հանգարատօրէն կը թուէ կանխազգուշական միջոցները: Սակայն շատ աւելի կնճոռոտ կը թուի այն տարաբախտ երիտասարդին, որ քոսան տարու եղած ատեն, այդ մասին բոլորովին տպէ՛տ ըլլալով հանդերձ, սահպետած է ընտրութիւն մը ընելու սա երկու րաներուն միջև. խոհեմ ժուժկալութիւնը և արթնդած զզայարանքներու անմեղազրելի զրգիրը:

Այսպէս՝ ինպիլը իր բժշկական հանգամանքէն դատ բարոյական ու հոգեբանական բնոյթ ալ ունի, որով զիտական զննութիւնները կրնան շահեկանօրէն լուսաբանել վեներական հիւանդութիւններու դէմ ձեռք առնուելիք կանխազգուշութիւններու ինդիրը:



ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԵԱՆ ԴԷՊՔԵՐՈՒ ՅԱՅԱԽՈՒԹԻՒՆԸ

ԵԿ Ի Բ Պ Պ Ա Տ Վ Ն Ե Ր Ը

Երկու կերպով կարելի է բացատրել ջերմամիզութեան գէպքերու յահախութիւնը, մէկ կողմէ՝ զգհուրիւնը, հաւանական վտանգին և ձեռք առնուելիք զգուշութիւններու մասին. միւս կողմէ՝ յափազանց վասնուրիւնը, որով այդ վտանգներուն ու զգուշութիւններուն աեղեակ են, սակայն կարեւորութիւն չեն ընծայեր վտանգներուն և զգուշական միջոցներ գործ չեն դներ, աւելորդ նկատելով զանոնք:

Ա. Այդ ազգակներէն առաջինը, վտանգին անզիւրիւնը, բոլոր գտակական զործերուն մէջ նկատուած է վեներական հիւանդութիւններու տարածման էական պատճառը. նոյնիսկ շատերու համար միակ պատճառը կը համարուի: Զերմամիզութեան վրայ խօսող բոլոր նոր երկասիրութիւնները իրաւամը ցաւ կը յայտնին որ երիտասարդութիւնը ագէտ է այդ մասին: Կարգ մը երիտասարդներ կանուխէն կը բաժնուին իրենց ընտանիքէն՝ ընկերային պահանջներու հետեւանքով, ինչպէս զինուրական ծառայութիւն, ուսում, ճամբարդութիւն, եւլն, ատանք շատ քիչ քան սորված են՝ իւրենց առողջութիւնը չկորոնցներու համար այն կնոջական միջավայրին մէջ, որուն հետ չիում կ'ունինան առաջին անգամ:

Ամանք ընտանեկան միջավայրին մէջ խիստ կը թութիւն մը ստացած, սեռային յարաբերութիւններու

մասին բոլորօվին տպէտ են, արդիւնք անհաղորդ դաստիարակութեան մը, որուն չնորհիւ մնաւոր ու ողբարի հածոյքները երկար ատեն կը շարունակուին: Անոնք ամենէն աւելի ենթակայ են վտանգներու, երբ իրենք իրենց զլխուն մնան: Այն ատեն կրկնակի վտանգի մը կը մատնուին. բացի վեներական հիւանդութենէն, ուրիշ վտանգի մը մէջ կ'իման իրենց տղիտութեան պատճառով. երբ առաջին զգացութիւնները կ'ունենան ձարսիկ կնոջ մը հետ ան իրենց մտքին ու կամքին կը տիրէ: Ամէն օր կը պատահի այդ բանը, և երբ տուամի փոխուի գործը, ընտանիքի հայրը արդէն իսկ շատ ուշ մնացած կ'ըլլայ իր պատախանաւոր գերը ստանձնելու համար:

Ուրիշներէ, լիսէներէ, քոլէմներէ և այլ գըպրոցներէ ելած, աւելի իրազեկ չեն: Ընդհանրապէս քիչ մը աւելի մօրուել քոլէճականը իր թեթեւ ջերմամիզուշ զութիւնը կ'ունենայ, զոր հանրատան մը մէջ վաստկածէ: Իր զարնկերներուն անխոստովանելի հիացման առարկայ, մարդիչի աստիճանին բարձրացած է, որուն պաշտօնն է զատարանին միւս աշակերտաներուն յայտնել սեռալին յարաբերութիւններուն զոյտութիւնը ու վտանդները: Բժշկական ուսանողներու հետ խօսակցութիւններ, զիտական կեղծ ու աման գրքոյկներ կը լրացնեն այդ անբաւական ուսուցումը:

Հաւ հասկցած են որ հոտ է չարիքը, ու քանի մը տարիէ ի վեր կը ջանան գարման տանիլ: Կանխազգուշութեան Ընկերութիւնը զովիլի ջանքով մը կը թական հաստատութեանց բոլոր վարիչներէն ինդրածէ որ գպրօցական վերջին տարին հաստատուի հակիրծուուցում մը այդ ուղղութեամբ: Մեծ մասը մերժածէ, ինչ որ կը գուշակուէր արդէն: Քոլէճականներու

տարիքը ունեցող աշակերտները չեն կրնար այդ գասին հետեւիլ առնասարակ. ոմանք կանխահասօրէն զարգացած՝ կ'օգտուին. բայց այդ ուսուցումը շատ մը աշակերտներու առջեւ պիտի պարզէ իրենց համար նոր հորիզոններ: Ընդհակառակը, նուազ վտանգաւոր կը դառնայ, իւրաքանչիւր անհատ առանձինն առնելով, երբ զզայարանքներու զարթնուուին ատեն պարզ ու յատակ խօսքերով բացատրուին հեշտանքն ու ցաւը իւրարու միացնող սերտ կապերը: Այդ գործը կրնայ ընել ընտանիքի հայր մը, երեց եզրայր մը, ուսուցիչ մը և յաճախ բժիշկ մը: Խիստ փափուկ գործ մըն է աս. պէտք է բառերը շատ լւա կշուկ և լիովին ճանչնալ մտայնութիւնը այն անձին որուն խօսք կ'ուղղուի:

Խորհուրդ կուտամ կարգալու Բրօֆ. Ֆուրնիէք փափկանկատօրէն գրած սա տետրակը. «Մեր զաւակներուն համար երբ տասնըութը տարու ըլլան անոնք»: Նախագուշական Ընկերութեան կողմէ հրատարակուած այդ զրքոյկը ամերող ֆրանսայի մէջ տարածուած է: Շատ զիւրին բան մըն է ապագայ ուսանողին զոյքերուն մէջ ապրգեցնել այդ զրքոյկը, որուն չնորհիւ ան պիտի կարէնայ հարկ եզածը սորվիլ, առանց անպէտ քաներով գրգռուելու:

Զօրանացներու մէջ աւելի կը զիւրանայ գործը: Քանի մը տարիէ ի վեր, բոլոր զօրագունդերուն մէջ զասախօսութիւններ կ'ընեն կասկածելի յարաբերութիւններու և ձեռք առնուելիք զգուշութիւններու, եւլն-ի վրայ: Նոյնիսկ չափազանցութեան մէջ ինկած են, յալումէլ բուատի գործածութեան մասին չըջարերական մը ուղղելով, զոր քննագատած են, ծայրայեղ վստանութիւն մը ներշնչելուն համար: Միեւնոյն ուղղութեամբ՝ խիստ լուրջ միջոցներ ձեռք առնուած են

բարձրագոյն վարժարաններուն, վարժապետանոցներուն, ժողովրդական համալսարաններուն մէջ, Ուսուցման Դաշնակցութեան կազմակերպած դասերուն և հրապարակախօսութիւններուն շնորհիւ:

Երբմամիզութիւնը ամօթալի հիւանդութիւն մը համարելու հին ըմբռնումը տակաւ թօթափելու ձըգտում մը կայ հիմա: Թատրոնի, գրականութեան, մամուլի ազգեցութեան տակ, այդ մասին կատարուած վիճարանութիւնները գիտուններու և բժիշկներու սեղմշրջանակէն դուրս կ'ելլեն ու ամբոխին մէջ կը տարածուին: Ամէն ոք կ'ընտելանայ այդ խնդիրներուն, որոնք երկար ատեն անմատչելի համարուած են. գրեթէ բոլոր միջավայրերուն մէջ այսօր անվրդով կը խօսին այդ խնդիրներուն վրայ: Երիտասարդութիւնը պիտի օգտուի այդ մտայնութենէն, և աւելի իրազեկ գարձած, պիտի կարենայ թերեւս լաւագցն կերպով զգուշանալ, եթէ երբեք այդ մասին ազգարարութիւնները օգուտ մը ունին նախազգուշութեան համար:

Բ. Զախազանց վատահուրիւնը աւելի վտանգաւոր է: Սրդարե, տղիտութիւնը ջերմամիզութիւն առաջ բերող չարիքներէն մէկն է, սակայն միակը և ամենէն կարեւորը չէ: Ճշմարտազանցութիւն մը չէ մեր ըսածը: Բոլոր մասնագէտ պաշտօնակիցներուս վկայութեան կը դիմեմ: առանց չափազանցութեան կրնամ հաւաստել թէ ջերմամիզութեան տասը գէպքերէն եօթը կը տեսնուին իրազեկ, վեներական հիւանդութեանց, վարակումի պայմաններուն և նոյնիսկ զգուշական միջոցներուն կատարելապէս տեղեակ անձերուն վրայ:

Ի՞նչո՞ւ: Ի՞նչ կը պակսի այդ ուսեալ, տարիքուանձերուն, որոնք յանախ կը փաստեն թէ միծ փոր-

ձառութիւն մը ձեռք բերած են սեռային յուզումնաւմից կեանքի մը մէջ, որ սուզի նստած է իրենց:

Երբ ախտածանաչութիւնը կ'ընենք անվերապահորէն, ընդհանրապէս սա պատասխանը կը ստանանք:

“Տոքթէօր, չեմ կընար ջերմամիզութիւն ունենալ, քանի որ միակ և միշտ նոյն կնոջ հետ յարաբերութիւն ունիմ: Հիւանդ չէ այդ կինը, տրառնջ չի յայտներ ցափ մը մասին և զինքը քննող բժիշկն ալ կասկածելի բան մը չէ գտած: Հետեւարար բացարձակապէս վստահ եմ այդ կնոջ վրայ, որ կանոնաւոր զիրք մը ունի և շուայտ կեանք չի վարեր: Ամենամեծ վստահութիւն ունիմ անոր վրայ: Իրաւ է որ այսօրերս քիչ մը չափէն աւելի յարաբերութիւն ունեցաց անոր հետ: Ասկէ զատ՝ շատ խմեցի ու յոզնեցայ, որավ երեւան ելաւ քանի մը տարի առաջ ունեցած հոսումս:”

Աս է սովորական պատասխանը քանի մը փափոխութիւններով: Մէկ քանի տողի մէջ ամփոփեցի այն փաստերը, զոր յաղթականորէն առաջ կը բերէ իւսու հիւանդը: Այդ փաստերը մէկիկ մէկիկ ձեռք պիտի առնեմ, անսոց տկար կէտերը գտնելու համար: Այսպէս ընելով թերեւս երեւան պիտի հանեմ, որ վարակումի պատճառը տղիտութիւնը չէ միայն: Նիւթէն ըրած այս շեղումովս, որ աւելի բարոյական է քան գիտական, իցի՛ւ թէ կարենայի սա համոզումը ներշնչել թէ կիներու հետ մշակուած յարաբերութիւններու մէջ պէտք չէ չափազանց վստահութիւն ունենալ. լաւ նախազգուշութեան հիմը կը ձեւացնէ ներողամիտ բայց անդրդուելի թերահաւատութիւն մը:

Ա. Առաջին վաս.— Կիմը առողջ է, կ'ըսէ մեզի հիւանդը, ու այդ առողջական վիճակն ալ ստուգուած բժշկական քննութեամբ մը: Ի՞նչ կ'արժէ ըստ ե-

ըեւոյթին լուրջ երեւցող այդ փաստը, որ անվիճելի կը թուի նոյնիսկ նախապաշտուած մաքի մը: Չեմ վարանիր պատասխանելու թէ բան մը չարժեր այդ փաստը, և անհրաժեշտ կը նկատեմ բացարութիւններ տալ այդ մատին:

Կին մը ջերմամիզութենէ կը բռնուի. ծանօթ ախտանիշեր երեւան կուզան, իգանդամի ջրուեց, սահիպողական ու կսկծեցուցիչ միզում, թարախոտ հոսում՝ բաւական առատօրէն, եւլն.: Մէկ ամիս կը տեսէ այդ ամէնը, և հազուագէպ է որ աւելի երկարի: Մերթ սա ցաւերը կը զգայ պարբերաբար. պարթօնիթ, փամիշտատապ, արգանդա-փորմաշկատապ, եւլն.: Աւելորդ է ըսել որ այդ ժամանակամիջոցին կինը բոլորովին խելօք կը կենայ՝ ցաւ ու նեղութիւն զգալուն համար: Յետոյ ախտանիշերը կը հանդարտին զեղերու և առողջապահութեան չնորհիւ: Երբ կինը կը սկսի իր բնականոն կեանքը վարել գարձեալ, աննշան բաներ միայն կը մնան իր վրայ, այնքան աննշան, որ հիւանդը կը յայտարարէ թէ կատարելապէս բուժուած է, համոզում մը որով ամենէն առաջ կը տողորուի բժիշկը:

Արդարեւ, ի՞նչ մնացած է հիւանդութենէն. ոչինչ. բացարձակապէս ոչինչ. բայց երբեմն ալ ճշմարիտ արգանդատապեր, իգափողի քրօնիկ բորբոքումներ, սուր ու ընդհատական մղբառւքներով, առատ արիւնահոսութիւն, որովանային սաստիկ ցաւեր, որոնք հիւանդը կը հարկադրեն բազկաթոռին վրայ հանգչելու: Պէտք է ծանրանալ կէտի մը վրայ, որ շատերուն ծանոթ չէ. կ'ուզեմ ըսել որ կնոց մօս վարակութի շրջանը անահնահօրէն կը շարունակէ, եթէ նոյնիսկ աննշան ախտանիշեր ունենայ, հազիւ զգալի, որոնք ընդհա-

տական կերպով երեւան գան: Հարիւրին ութառն, հիւանդութեան սուր չըջանը անցուցած կին մը կրնայ զբաղիլ իր տնական ու սեռային գործերով: Ի՞նչ մնացած է իր հին հիւանդութենէն. արեան հոռում՝ երբեմն ամենօրեայ՝ հազիւ նշմարելի, մերթ ընդ մերթ որովայնի տաղակալի այլ վաղանցիկ ցաւեր, աւելի գժուարին ու նուազ կանոնաւոր դաշտան: Սա է հզարձը: Քանի մը ներարկումներով և սորոթէ հրաժարկով՝ նեղացուցիչ իսկ չեն դասնար այդ անհանգըստութիւնները:

Ի՞նչպէս կ'ուզէք որ այդ կինը զգուշութիւններ ձեռք առնէ, երբ իր չնորհները կը չուցըէ, քանի որ իր հիւանդութիւնը մէկ քանի ամսուան և նոյնիսկ մէկ յանի տարուան հին յիշատակ մը կ'արթնցնէ միայն: Միթէ կարելի՞ է որ սիրահարը, սրաի բարեկամը կամ լուրջ յաճախորդը զգուշական միջոցներ պահանջէ այդքան բացառողջ երեւոյթ ունեցող կնոջմէ մը, զոր զժուարագով կը համելի նուածումով մը: բութեամբ ձեռք անցուցած է համելի նուածումով մը:

Որքան ալ ճշմարտապանցական թուի մեր ըսածը, սա՛ ստոյդ է որ զգուշութիւնները յաճախ օգտակար կ'ըլլան առաջին վարակումէն շատ ետքն իսկ, երբ կինը աննշան սպիներ կը կրէ, զոր չեն նշմարեր խելամուս չեղողները և նախապաշտուած բժիշկն ալ շատ զժուարութեամբ կը զանազանէ:

Սակայն չեմ ուզեր չափազանցութեան մղել իմ մտածումն և ըսել թէ ջերմամիզութենէ վարակուած կին մը առվորարա իր հիւանդութիւնը կը փոխանցէ ամիսներ յետոյ: Երբե՛ք: Բայց կը պնդեմ որ այդ կինը, կարգ մը պարագաներու մէջ, կրնայ վարակել ընդհատարար. կիններու այդ գատակարգը, երեւութաղէս բուժուած, որ մերթ ընդ մերթ վարակելու ուժ

կ'ունենայ , ամենէն բազմաթիւ ու ամենէն վտանգաւորն է :

Պէտք է ճշգել վարակումի նպաստաւոր պայմանները՝ նախազգուշական տեսակէտով :

Վարակումը աւելի հնարաւոր կը դառնայ այն պարագային , երբ ներքնարգանդային արեան համախմնում առաջ կուգայ կամ կը սաստկանայ ու կը նպաստէ արտաթորումին :

Այդ պարագաներուն մէջ ամենէն առաջ պէտք է յիշատակել դաշտանի խանգարումի շրջանը : Աշխարհի ստեղծումին չափ հին ճշմարտութիւն մըն է թէ այդ միջոցին կատարուած սեռային յարաբերութիւնները մասնաւորաբար վտանգաւոր են , թէեւ գէշ կերպով մեկնուած ըլլայ այդ ճշմարտութիւնը : Մովսէս , որ նուրբ գիտող մըն էր , սա օրէնքը դրած էր Դեւտացւոց Գրքին ժե . գլխին մէջ . «Երբ կինը անհանգիստ ըլլայ , ինչ որ ամէն ամիս կը պատահի բնութեան օրէնքին մէջ , պէտք է հեռու մնայ իր ամուսնէն » : Դարերու ընթացքին փոխանցուած այդ աւանդավէլը թէ դաշտանի արիւնը վեասակար է՝ թեւրեւս այդ օրէնքը ունեցած ըլլայ իրը մեկնակէտ :

Ոչ , դաշտանի արիւնը վարակիչ չէ . բայց արգանդային գեղձին այդ ընդհանուր մաքրումը իր հետ կը քշէ կը տանի հին բորբոքումի մը հօն ձգած շարաւալից արտաթորումները : Դեւտական օրէնքին անգիտակ զուգաւորող մը պիտի վարակուի այդ մնասակար արտաթորումներէն : Պէտք չէ յարաբերութիւն ունենալ դաշտանէն երկու օր յետոյ , երբ դեղնորակ արտաթորումներ կ'ըլլան , աւելի տեւական ու առատ՝ հինցած ջերմամիջութիւն ունեցող կիներու մօս քան թէ ուրիշներու վրայ : Յաճախ հաստատած եմ այդ պարագան , հիւանդը տակաւին բան մը չըսած :

Ուրիշ շատ մը պարագաներ ալ կան , թէեւ պատահական , որոնք կարող են առաջ բերել արեան համախմնումի և արգանդային արտաթորումի այդ վաղանցիկ վիճակը : Վարակումներու մեծ մասը ատով միայն կը բացատրեմ : Այդ պարագաները միշտ այնքան յեղակարծ կ'ըլլան որ ամենէն հաստատ կանխատեսութիւններն իսկ լիր սիմալին : Երէկ երեւութապէս այնքան քաջառողջ կին մը կրնայ վաղը վարակել , առանց ուրիշն պատուաստուած ըլլալու . շատ սովորական է աս : Երկու բարեկամներ միեւնոյն կնոջ հետ յարաբերութիւն կ'ունենան մէկ քանի ժամուան միջոցին . մէկը անվեսա կ'ազատի , իսկ միւսը ջերմամիջութենէ կը բռնուի : Յաճախ լսած ենք որ երիտասարդ մը ջերմամիջութենէ կը բռնուի քանի մը ամսուան յարաբերութենէ մը յետոյ : Սակայն իր սիրուհին վրայ կատարուած անմիջական քննութիւն մը ցոյց կուտայ թէ նոր վարակումի ու ե նշան չի կրեր ան : Կը յիշեմ բարեկամիս մէկ հետաքրքրաշարժ արկածը . ան յարաբերութիւն ունէր կնոջ մը հետ , որ ատենօք ջերմամիջութենէ բռնուած , կարելի եղածին չափ զգաստ կեանք մը կը վարէր : Երկու տարուան անխառն երջանկութիւն մը կը նուփրազործէր անոնց ապօրինի այլ բարերաստիկ միութիւնը : Օր մը , պիսիքլեթով զբօսական պտոյտ կը կատարէին Ալպեաններուն մէջ . առանձնութիւնը և բաց օգը գէշ փափաքներ թելազրեցին , որոնց վայրկենապէս գոհացում տրուեցաւ խոտին վրայ , ճամբան եղերող բարձր ծառերուն հովանիին տակ : Առուակ մը իսկ չկար հոն . հետեւաբար կինը կանխալուացում չկ'ատարեց հակառակ իր արտաթորումին , որ աւելի տատ գարձած էր այդ զբօսական մարզանքին չնորհիւ : Վեց օր յետոյ՝ բարեկամս ուշագրաւ կերպով առատ հոսում կ'ունենար :

Աւրիշ իրողութիւն մը . իրաւագիտութեան ուսանող մը ամէն զիշեր կ'անցընէր կէս լուրջ կնոջ մը հետ . իր բարեկամներէն մէկն ալ երբեմն յարաբերութիւն կ'ունենար նոյն կնոջ հետ : Այդ բարեկամը ջերմակատապ մը ունեցաւ : Բուժուելէ յետոյ իր տարփուհին քոլ վերադարձաւ , ու երկրորդ անգամ ջերմամիզութիւն բոնուեցաւ : Սակայն իրաւագիտութեան ուսանողը որ ամէն օր յարաբերութիւն ունէր իր հոմանուհին հետ , միշտ քաջառողջ էր : Խիստ հարցուփորձէ մը յետոյ , կինը ինձի խոսանվանեցաւ թէ բան մը չէր զգար զինքը ամէն օր վայելող ուսանողին հետ , բայց տարօրինակ ցնցումներ կ'ունենար անոր բարեկամին թեւերուն մէջ : Համոզում զոյացուցի թէ այդչափը կը բաւէր արեան համախոնում առաջ բերելու , ինչ որ կը նպաստէ հիւանդութեան փոխանցումին :

Նմանօրինակ մանրագէւեր չատ կան : Թերեւս լաւագոյն ձեւն է՝ մեր մտածումը հասկնալի գարձնելու համար , նկատելով որ անհուն այլազանութիւն ունին այն պարագաները , որոնք կրնան նպաստել այդ վայրկենական վարակումին , ինչպէս յոզնութիւն , սրօրթ , լոգանքի պակաս , զուգաւորութեան չափազանցութիւն , ուեռային զրգութիւն , եւն :

Չատ օգտակար կ'ըլլայ հասկնալ կնոջ մօտ վարակիչ կարողութեան երկար տեւողութիւնը , որ վայրկենական վեստակար կը դատնայ . այսպէս՝ ոչ միայն նախազուշական միջոցներ ձեռք կ'առնուին , այլ կարելի կ'ըլլայ բացատրել կարգ մը երեւոյթներ , որոնք երեւոյթապէս անհասկնալի կը մնան : Քիչ չատ փորձառու անձ մը , որ իր տարփուհին ջերմամիզութիւն կ'առնէ , սա մտածումը կ'ունենայ թէ իր հոմանուհին ուրիշ տեղէ վարակուած է վերջերը : Յաճախ իրաւունք

ունի այդ անձը : Բայց ո՛չ միշտ : Բժիշկը , որ իր խառնուածքով հաշտարար է , պարտաւոր է այդ անձին հասկցնել թէ կնոջ ջերմամիզութիւնը կարող է հին արգանդատապերու հետեւանք ըլլալ . հոմանուհին անշուշտ չգիտնալ կը ձեւացնէ այդ արգանդատապին ծագումը . սիրահարը կամ կը մոռնայ կամ կը ներէ :

«Կինը շան կը նմանի . անգամ մը որ ջերմամիզութիւն ունենայ՝ ամբողջ կեանքին մէջ կը տեւէն , կ'ըսէր ծերուկ ուսուցիչներէն մէկը : Զափազանցութիւն կայ այս խիստ ֆօրմիւին մէջ : Նուազ հակիրծ և աւելի գիտական ձեւով պիտի ըսեմ .

Երբ կին մը չերմամեզուրենէ բռնուի՛ յատ ինչ անգամ լաւ ու երկար ատեն կը դարևանուի . վերջնապես բուժուելու համար : Դրեք միշտ յրենիկ արգանդատապի պէս բան մը կը մնայ , որ կարող է առանձին վարական դաշտուածութիւնը ու առանձին համախոնումի աղջեցուրեան տակ :

Այդ պայմաններուն մէջ ի՞նչ կարեւորութիւն ունի բժիշկական քննութիւնը : Գրեթէ ո՛չ մէկ կարեւորութիւն : Աւելորդ է ըսել որ պարզ և յաճախագէտ պարագաներու վրայ չեմ խօսիր , ուր կինը երրորդէ մը վաստկած է ջերմամիզութիւնը . ատոր աթատանաչութիւնը զիւրին է չնորին ֆիզիքական նշաններու և մանրագիտական զննութեան : Այդ պարագաներէն զուրո՞ չատ դժուար է համոզում մը զոյացնել : Քրոնիկ արգանդատապ ունեցող կին մը , որ կ'ուրանայ ամէն ախտանիշ , եթէ երբեք առատ ներարկում մը ընէ նախապէս , բժիշկին կատարած քննութիւնը ապարգիւն կը մնայ : Ցաւը զրեթէ անզգալի կ'ըլլայ շշափուած ատեն , վէրքին թարախոտ պատրոյզը կը ընայ գոյութիւն չունենալ ու իդափողին մէջ ալ արիւնի

թեթեւ համախռնում մը հազիւ կը նշմարուի , և սակայն հիւանդը առջի օր մէկը վարակած է : Ամէն օր կը տեսնուի ասիկա: Լուացումէ առաջ պէտք է քննութիւն կատարել քանի մը անկամ , փարացով մը հաւաքել արդանդային արտաթորումները ու մանրագէտով զննել զանոնք , եւլի: Ծնդհանրապէս չեն կատարուիր այս հետազոտութիւնները : Կը խոստովանիմ թէ կնձուու և յաճախ անօգուտ են: Բայց երբ այդ քննութիւնը չի կատարուիր , գէթ բժիշկը հաստատական շեշտ մը գործածելու չէ , այլ միշտ կասկած յայտնելու է , իրեն զիմող զոյգին խորհուրդ տալով զգուշական միջոցներ առնել և ախտաճանաչումի դժուարութիւնները ցոյց տալ :

Բ. Գանք երկրորդ փաստին . «Այն կինը որ զիս կը պատուէ իր նորհներով , կանոնաւոր դիրքի մը մեջ կը գտնուի . շուայտ կեանք մը չի վարեր», կ'ըսէ մեր հիւանդը : Ի՞նչ կը նշանակէ այս հաստատատիւ իսուքը զոր յաճախ կը լսենք , և ի՞նչ արժէք կը ներկայացնէ : Լսենք մեր հիւանդը , որ պարագային համեմատ , սա բացատրութիւններն մէկը պիտի տայ .

1. «Այն կինը , որուն կը յաճախեմ , կ'ըսէ առաջին հիւանդը , իր ընտանիքին մօտ ապրող զործաւորնի մըն է:» Լրջօրէն կը հրաւիրեմ զգուշանալ գործաւորուհին , մանաւանդ այն գործաւորուհին , որ իր ընտանիքին մօտ կ'ապրի: Բացատրեմ թէ ինչո՞ւ : Գործաւորուհին ալ ուրիշին պէս մարգկային տկարութիւններ ունի : Իր սահմանափակ թուով սիրահարներէն մէկը կրնայ դասն յիշատակ մը ձգած ըլլալ իրեն : Աւելորդ է ըսել որ սիրահարը սովորաբար կարեւութիւններու չընծայեր ազգարարութիւններու և խորհուրդներու : Իեղծ աղջիկը կը զարմանայ ստիպողու-

կան միզումներուն և արեան առատ կորուստներուն համար : Բայց մաքէն չանցնիր որ այդ վիճակը դարձանի կը կարօտի : Արդէն գործատիրուհին թոյլառութիւն չըներ հանդիսուի համար , իսկ ընտանիքը դժուարու պիտի ըմբռնէ ներարկումի պէտքը : Ուստի գործաւորուհին լուս տառապանքի մը կը մատնուի : Արգանդագատապ մը առաջ կուգայ ու կը տեւէ , քանի որ անյայտ կը մնայ ան : Այդ միջոցին , իրեկունները աշխատանոցէն դարձին , իր հանդիպումներուն մէջ չերմամիզութեան միքրոպը կը փոխանցէ զինքը հրապուրողին , որ կը խարուի մանկամարդ գործաւորուհին համեստ ու պարզունակ ձեւերէն : Բրոֆ . Ֆուրնիէ վարաչուած կիններու մասին վիճակազրութիւն մը պատրաստած է , ուր զերակիս զիրք մը կը գրաւէ գործաւորուհին : Արձանագրուած հանրակիններուն հետքաղլատմամբ շատ աւելի վարակուած կայ գործաւորուհիններուն մէջ . թատրոնի աղջիկներուն ու գաղտնի պուստիկներուն միջեւ կը գտնուի իրենց տեղը : Գործաւորուհիններուն ամաթէօրները խոր ապչութեան մը պիտի մատնուին այդ պատճառով , և իսկապէս տիսուր բան է :

2. «Տօքթէօր , կ'ըսէ երկրորդ հիւանդ մը , բնաւ մտահոգ չեմ այդ մասին , որովհետեւ իմ սիրուհիս անուշնացած կին մը չեն : Աւ իր անժխտելի փաստին առջեւ գէմքը կը լուսաւորուի յաղթական ժպիտով մը : Կ'երեւայ թէ պատկը կը սպաննէ միքրոպը . . . : Արդ , ի՞նչ կը պատահի իրականութեան մէջ : Նախ ամուսինը շատ լաւ կրնայ վարակած ըլլալ իր կինը , կամ իրենց ամուսնութեան սկիզբը՝ գէշ զարմանուած քրոնիկ չերմամիզութեան մը պատճառով (գժբախաբար շատ տափակ իրողութիւն մը) , և կամ ամուսնական յարկէն



դուրս սիրային արկածի մը հետեւանքով . միւս կողմէ կինն ալ յանցաւոր կրնայ ըլլալ , չերմամիզութեան այդ միջրոպը նախորդէ մը ժառանգելով : Երկու պարագաներուն մէջ ալ ինամբ չի տարուիր կամ գէթ անբաւական է տարուած ինամբը , քանի որ այր և կին երբեք իրարու չեն խոստովանիր իրենց իրական վիճակը , իսկ եթէ թժիշկը կուանէ , գժբախտաբար շատ խորը թափանցելու փութաջանութիւնը չունենար : Հետեւանքը կ'ըլլայ քրոնիկ արգանգախտ , որովայնիցաւ , սպիտակ զաշտան և վարակում :

Յ . «Վախինալու բան մը չունէի , քանի որ հանրատան մը մէջ կը գտնուէի» , ըստ ինձի երրորդ հիւանդ մը : Այս վստահութիւնը մէծապէս պատուարեր է մեզի , առողջապահական սպասարկութեան բժիշկներուս համար , բայց չափազանցուած կը գտնեմ : Մեր շարաթական այցելութիւններուն ատեն եթէ ուղեինք արգելափակ ընել չերմամիզութենէ բանուած բոլոր կիները , ամբողջ հիւանգանոցներ նեղ սպիտի զային : Հիւանգանոցներու մասնաւոր սրահները կը դրկենք պարթօլիթի , փամփշատապի , իգափողի բարբոքումին և սուր արգանգատապի ենթակայ եղող կիները միայն : Ատկէ զատ ուրիշ բան չենք կրնար ընել : Հարցաքննութիւնը անօգուտ է , իսկ լուացումները միշտ հնարաւոր են քննութենէն քանի մը վայրկեան առաջ , ուրով սփապուած ենք թոյլատու գտնուելու , քանի որ անկարելի է երեւան հանել չերմամիզութեան հետքերը : Այս աեսակետով՝ հանրակինը , վաղեմի պունիկը սա առաւելութիւնը միայն ունի որ քիչ մը աւելի լաւ լուացումներ կ'ընէ քան ուրիշ մը :

Յ . Վերջապէս կայ վերջնական փասը , որով հիւանդը կը վկայէ թէ ամենակատարեալ վասահուրիւն ու-

նի մեղադրուած կնոջ վրայ : Ի՞նչ պէտք է ըսել և ի՞նչ պէտք է ընել այդ պարագային : Եթէ երբեք ձշմարտութեան զօրաւոր ձայնը մեզի կը թելազրէ աղաղակելու թէ ամէն կին ենթակայ է մարդկային տկարութիւններու , միւս կողմէ՝ լաւ հասկցուած շահու մայրը եղող խոհեմութիւնն ալ մեզի խորհուրդ կուտայ ձեռնապահ մնալու : Արդարեւ , ի՞նչ հարկ կնճոտակելու կացութիւնը : Ազնիւ մարդ մը , կատարելապէս վստահ կնոջ վրայ , որուն հետ կանոնաւոր յարաբերութիւններ կը մշակէ տարիներէ ի վեր , չերմամիզութենէ կը բանուի յանկարծ : Քիչ մը դատողութիւն պիտի բաւէր անոր հասկցնելու թէ ուրիշի մը ցանածին պատուղն է որ կը քաղէ : Այդ անձը կը նախրնարէ հաւատալ որ իր չերմամիզութիւնը միզանցքի բորբոքում մըն է միայն , արդիւնք չափազանց առնականութեան կամ սպիտակ զաշտանի՝ զոր աննշան կը համարէ :

Դիւրին բան չէ համոզել որ հիւանդը գարմանէ ինքինքը . ի հարկին՝ պէտք չէ ձակատէն հարուածել , այլ իր հայեցակէտները ընդունիլ , իր մենամոլութիւնը փայփայել . յայտարարել թէ միզանցքի պարզ բորբոքում մը հաւատական է , բայց քիչ մը երկարաւեւ զարմանումի մը կը կարօտի , եւնի : Այդ առաջին կէտին մէջ յաղթանակելէ յիտայ՝ թժիշկին գերը զերծացած է այլեւս : Եթէ առաքելութենէ կ'ախորմիք , կրնաք ձեր գործը հետապնդել և քիչ մը սկեպտութիւն ներմուծել ձեր հիւանդին միտքին մէջ : Բայց երբեմն վտանգաւոր կը գառնայ այդ փոքր խաղը : Ահա թէ ի՞նչ կը պատահի . ձեր պերճախուութիւնը կը թափէք՝ ապացուցանելու համար թէ իրական չերմամիզութենէ մը բոնուած է հիւանդը , բայց ան կը

յայտնէ թէ իր օրինաւոր կնոջ հետ միայն յարաբերութիւն ունեցած է : Անհաճոյ կացութիւն մը և գժբնգակ աշխատութիւն մըն է բժիշկին համար : Դժբախտաբար այլեւս հեռու է այն թուականը , երբ վիքթօրի կը մեղագրէր օդին ապականութիւնը , Ամպրուազբարէ՝ խոնաւ օդին կատարուած ձիու մարզանքը , իտալացի կիները՝ (որոնց վրայ կը խօսի Ֆալօր) օրհնւած ջուրը :

Արգէն ապարդիւն պիտի ըլլար այդքան պերճախօսութիւն : Իր ընկերուհին անայլայլ հաւատաբժութեանը համոզուած , տարփախտէ բննուած է : Բաց ի քանի մը յարգելի ու հազուազիւտ բացառութիւններէ , առնասարակ սէր անունով կը դարդարեն այն հոգեկան բաւական կնճռոտ զիճակը , ուր հեշտասիրութիւնը , սնապարծութիւնը և սեփականատէրի բնազդը հաւասար չափերով իրարու խանուած են : Այդ կոյր զգացումը ունեցողին մէջ ուրիշ ու է համոզում մուտ չի զործեր : Անընդունելի և վիրաւորիչ կը նկատէ այն ենթադրութիւնը թէ իր սիրու կինը նոյն զգացումը կամ զգացութիւնը չունենար , որով ուրիշ տեղ կը փնտոէ զանոնք : Ուստի նախընտրելի է այդ մասին չանգելը :

Արգէն իսկ մեծ բան մը ըրած կ'ըլլայ բժիշկը , երբ կարելի եղածին չափ աղեկցնէ իր հիւանզը և զայն համոզէ որ յարաբերութիւն չունենայ կնոջ հետ , կատարեալ բուժումէ առաջ : Շատ մը խիստ նպաստաւոր պայմաններու մէջ կարելի է լաւագոյնը ընել : Օրինակի համար , ու է պատրուակով ջանալու է քննել սիրուած կինը , որուն տրուած առողջապահական խորհուրդները և մէկ քանի ներարկումներ չառ օդտակար պիտի ըլլան , նոր վարակումները արդիւ-

լու համար յարաբերութեանց վերսկսումի ատեն : Աս է նախազգուշական լաւագոյն միջոցը :

Նախորդ էջերուն մէջ խոհնմութիւն յանձնարարեցի սիրոյ ախտէն բռնուած պատանիին : Սակայն չեմ ուզեր որ այդ պարզ ազգարարութիւնները իրախոյս մը ըլլան գիջութեան կամ միզօժինիի , որ աւելի ենթակայ կ'ընէ ջղային հիւանդութեան , քան թէ հինցած ջերմամիզութիւնը : Բայց կ'ուզեմ թէ խոհնմութիւնը , կէս կասկածը նախարանն է ամէն նախազգուշական միջացներու : Առանց անոր , մեռեալ տառ կը մնան տալիք բոլոր խորհուրդներս , որովհետեւ զէնք մը գործածելու համար նախ պէտք է համոզուած ըլլալ անոր օդտակարութեան մասին : Ոչ միայն գիտարու է գործածութիւնը , այլեւ կամենալու է : Եթէ երբեք չափազանցելու ձգտում մը ունեցայ իմ ապացուցումիս մէջ , թո՞ղ ֆէմինիոթները ներողամիտ գըտնուին , որովհետեւ նպատակս յարի է :



ՆԱԽ ԶԳՈՒՇԱԿԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Հիմա զործնական բաներու վրայ խօսինք: Երբ առ համոզումը ունենաք թէ ձեր անկողնի ընկերը անխառ է, ի՞նչ պիտի ընէք:

Նախ ըսենք որ կարգ մը պայմաններ ու շրջաններ մասնաւորաբար նպաստաւոր են վարակումի, բայց ջերմամիզութեան միքրոպը չեն կրնար առաջ բերել հոն, ուր զոյութիւն չունի ան, բայց իդափողն կամ արգանդափողն մէջ այդ միքրոպին առատօրէն զբանուելուն կը նպաստեն:

Ինչպէս ըսած եմ արդէն, դաշտանի ատեն և զաշտանին մօտերը լաւ չէ յարաբերութիւն ունենալ: Երբ հիւանդ մը ինծի կը յայտարարէ թէ հոսում ունի սոզորական տարփուհիի մը հետ, ո և է յայտնութիւն լսելէ առաջ, կ'ըսեմ թէ սիրուհին հետ յարաբերութիւններ ունեցած է դաշտանի շրջանին կամ անմիջապէս յետոյ: Չորս դէպքերու վրայ երեքը իմ ըսածիս պէս կ'ելլէ: Ցիկցէք Մովսէսի պատուէրը ու այդ աշխանին հանդարտ ձգեցէք ձեր սիրուհին:

Յարաբերութիւնը այսպէս կրնայ վասնդաւոր ըլլալ ամէն անգամ որ կինը երկար ատեն լուացումներ չէ որած: Իմ հեծելանաւորդիս յատկանշական պատմութիւնը կը կրկնուի ամէն օր: Շատ աւելի երկիւղալի է չափազանց գինարբուքներէ և փափկաճաշակ ու երկարատեւ ինչոյքներէ յետոյ կատարուած զուգաւորութիւնը: Նորէն կարդացէք Բըքօրի հոչակաւոր կերպը, ջերմամիզութենէ բոնուելու համար:

Սակայն, բոլորովին սխալ է այն կարծիքը թէ այդ ամէնը (դինի, շամբանիա, համեմ, պար եւլն.) ջերմամիզութեան միքրոպ մը չի կրնար տալ այն անձին որ չունի զայն: Ան շատ լաւ իր մէջ կը բովանդակէ ջերմամիզութիւն առաջ բերելու նպաստաւոր պայմաններ: Հետեւաբար արեան համախռնում պատճառող չուայտութեան այդ նախարանը նուազագոյն աստիճանին իջեցնելու կամ անմիջապէս յետոյ նորոգիչ քուն մը քաշելու է:

Չուչաւորութենէն առաջ, նոյն միջոցին կամ ետքը կարգ մը զգուշութիւններ յանձնարարելի են:

Չուգուրութենէն առաջ պէտք է պահանջել (մանաւանդ եթէ նոր կամ վազանցիկ տարփուհի մըն է) առատ, ամբողջական ու երկարատեւ լուացում մը: Յածախի ինծի կը հարցնեն թէ այսինչ կամ այնինչ հրաշալի հականեխականը ի՞նչ օգտակարութիւն ունի, պատի գունաւոր ծանուցումները կարդալէ յետոյ: Առոնց ամենքն ալ փարձուած են: Չուրը կը բաւէ, հոտաւէտուած կամ ոչ, պայմանով որ առատ ըլլայ ու իգափողին բոլոր ծալքերուն մէջ տարածուի զրեխի ծայրափողով, կամ ցուցամատավ ու միջնամատավ: Չտիւազանցած չափանի ըլլամ, երբ ըսեմ թէ այդ միակ միակ զգուշութեամբ ամենօրեայ ջերմամիզութեան գէպքերու կէսը պիտի նուազի:

Պէտք է զործածել մաշկէ այն պահպանակը, որ անզիախան յարօր կը կոչուի սովորաբար: Այս', առանց վարանելու, ամէն անգամ որ կարելի ըլլայ: Այդ խեղճ մաշկը ձախողութեան մատնուած է իր սկզբնաւորութիւնն ի վեր: Իր հնարիչը, անզիախի բժիշկ Քօնտօմ, քիչ մնաց որ իր հայրենակիցներուն կողմէ պիտի քարկոծուէր: Կ'ըսէին թէ շատ զիւրա-

բեկ էր: Գեշ աչքով կը դիտուէր ան, և անոր գործածութիւնը անարգական կը նկատուէր նոյնիսկ ամենէն աւելի վարակուած բողերուն կազմէ, որոնք կը մեղադրէն զայն, բայլով թէ սպիտակ գաշտանի ենթարկած է զիրմնք: Իրքօր չատ գէ: Կերպով կը խօսի անոր մասին: Սրամիտ կին մը նշատակած է պահպանակը՝ սա խօսքով որ լաւ ընդունելութիւն գտած է «Այարդի ոստայն՝ վտանգին դէմ, զրա՞ն՝ սիրոյ գէմ»: Ակներեւ չափազանցութիւն մը կայ ատոր մէջ: Մերասպետական խառնուածքը՝ կը խորչի այդ զործիէն, որ կրնայ կատաձելի վարձնել զայն զործածոյին ճաշակը, բայց չի զարդիր օգտակար ըլլալէ: Ատենօք փորձեցի վերահաստատել այդ պահպանակը, քանի որ Իրքօրէ ի վեր ան կատարելագործուած է քառուչուի ծծմբաւորումավ, որ այդ փոքր զործիին կուտայ բաւարար տոկունութիւն մը, եթէ հաւատ ընծայուի այն փորձերուն որ Լիսն արտասանուած թէղի մը մէջ առաջ բերուած են: Հնարիչը փումով ձեռք բերաւ 50 սանթիմի երկայնութիւն մը, առանց պատուելու զայն, ծակող ամէն տեսակ զործիներու կրկնակի հարուածներուն կը տոկար: Ահա ինչ որ կրնաց զոհացում տալ ամենէն պահանջկոտ կիներուն և դժուարահանած ամառէօրներուն:

Եթէ պահպանակ չգտնուի, ճարպ քսեցէք ծննդական զործարաններուն: Վազելինը կամ ուրիշ օծանելիք մը լաւ կը պաշտպանէ, և ազդու է ջերմամիզութեան դէմ, ու խիստ օգտակար՝ ֆրանկախտի դէմ: Հեշտասէրներու ըստին նայելով, չփումները այդ պատճառով նուազ կը զրգուն զգայականութիւնը, ինդիր մը որ նկատի չէինք տոած, քանի որ զուգաւորութիւնը զբօսանք մը չենք համարիր իբր բարուախօս ։

Ստոյգ է որ զգայականութիւնը գոհացում չի գտներ այդ սեղմումներով: Այս մասին ալ առողջապահութիւնը հակառութեան մէջ է հաճոյքին հետացայացտ է թէ երկարատեւ ու կրկնուած զուգաւորութիւնները աւելի վնասակար են քան թէ արագ ու եսասէր զործողութիւն մը: Քանի մը ժամուան տարմերութեամբ, Ք... ջերմամիզութենէ կը բանուի մինչ Փ... անվասա ազատած է: Պատճառը սա է որ Ք... իր արտայայտութեան մէջ հաղորդիչ հուրք մը դրած է, զոր ուժգնորէն զգացած է կինը, ինքն ալ դայնորէն մասնակցելով: Non morari in coitu, non bis idem. Ճին պատուէր մը զոր միտք բերելու է պէտք եղած առթիւ:

Իսկ յետոյ: Ամենէն կենսականն է չերկարաձգելերջին գրկախառնութիւնները, քունի դիմանալ, կայերելի եղածին չափ ուժով միզել և կատարեալ լուսցում մը ընել ջուրով ու օճառով: Կարծեցեալ հականիմականները կը զրգուն զեղձը և մարթային հիւանդութիւն մը առաջ կը բերէն: Օճառը կը բաւէ, և ի հարկին կարելի է օ ար քօլոներով լուսցում ընել:

Եթիտասարդներ կան, որոնք սեռային յարաբութիւններէն յետոյ հեղուկներ կը ներարկեն: Ոչ օգտակար են և ոչ ալ վնասակար: Հեղուկը եթէ շատ զրգսիչ ըլլայ, գէ: սովորութիւն մը չէ ։ Լուսցումները կարող են մեքենաբար ազգել, մաքրելով թարախը: Զուգաւորութենէն մէկ քառորդ ժամ յետոյ՝ բերմանկանաթով (0.05 սանթիկրամ՝ 200 կրամ յուրի համար) կամ բէզորսինով (2 կրամ՝ 100 կրամ յուրի համար) կատարուած ներարկում, լուսցումները կարծեմ նախազգուշական ճշմարիտ օգտակարութիւն մը ունին: Բնդիշակառակը, անօգուտ է հետեւեալ որը

այդ միջոցին գլուխել, որ կարող է արուեստական գըր-
գուռնթիւն մը առաջ բերել և ջերմամիզութիւն նկատ-
ուիլ նսթակային կողմէ . մանրադէտին գործածութեան
չվարժուած բժիշկն իսկ ջերմամիզութիւն կը կարծէ :

Այս ամէնը կնճռու է, բայց նուազ կնճռու քան
այն կերպը, որ մեծ հաշակ հանած է Գերմանիոյ մէջ :
Այդ կերպն է զուգաւորութենէ յետոյ՝ հարիւրին չորս
համեմատութեամբ 2-3 խորանարդ սանթիմ բրօթար-
կոլ պարունակող սրուակի մը բովանդակութիւնը նե-
րարկել ու քանի մը վայրկեան դուրս չհանել այդ
հեղուկը : Ատկէ առաջ կուգայ բորբոքում մը, որ բա-
ւական ցաւ կը պատճառէ, 4-5 օր կը տեսէ ու փառ
սակար միքրոպներ առաջ կը բերէ : Այդ կերպին վրայ
ի՞նչ կը խորհին ամէն անոնք, որոնց սեռային կարո-
ղութիւնը կը պահանջէ օրը մէկ կամ երկու անգամ
յարաբերութիւն ունենալ :

Ոչ մէկ բան չափազանցելու է : Մարդկային ամէն
ձեռնարկ բախստի հետ կապուած է . մասնագեղերու
մասին հրատարակուած բէքլամի զրգոյկներուն մէջ
միայն բացարձակ ապահովութիւն ներշնչուած է :

Դիւրին է ողջախոնութեան խորհուրդներ տալ,
բայց առասարակ մաֆիկ ընող չկայ : Իմաստութիւնը կը
պահանջէ նուազագոյն աստիճանին իջեցնել վտանգ-
ները . խոհեմութեան ու առողջապահութեան համեստ
խորհրդատուներուն ընելիքն ալ ատ պէտք է ըլլայ :



ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Անվիճելի է որ վեներական հիւանդութիւնները
մեծ համեմատութեամբ աւելցած են ֆրանսական բա-
նակին մէջ : Բժիշկները կը հաստատեն այդ իրողու-
թիւնը թէ՛ յարժուն հիւանդանոցներուն և թէ կեղ-
րոններուն մէջ . հիւանդներու յարածուն թիւր լուրջ
մտահոգութիւն պատճառած է քաղաքային և զինուո-
րական իշխանութիւններուն, գիտական ընկերութիւն-
ներուն և հանրային կարծիքին, նկատելով որ այդ
ինչպին նուիրուած են շատ մը յօդուածներ, տեղե-
կագիրներ ու վիճարանութիւններ :

Այդ մտահոգութիւնը պաշտօնապէս ալ ի յայտ
կուգայ այն երկու շրջաբերականներով, որոնց մէկը
1916 յունուար 5ին Առողջապահական Վարչութեան
կողմէ յղուած է բոլոր շրջաններու կառավարիչներու,
իսկ միւսը՝ ընդհանուր սպայակոյտին կողմէ բանակներու
քննիչ-բժիշկներուն : Այդ հրահանգները կը յիշեցնեն
1902 ապրիլ 7ի և 1907 սեպտ. 23ի և նոյ. 16ի շրջա-
բերականները, լրացուցիչ խորհուրդներ տալով :

Այս երեւոյթը ոչ նոր է և ոչ ալ զարմանալի: Ժո-
ղովուրդները ու պատերազմները զոյութիւն ունենա-
ւէն ի վեր, ֆրանկախոր և ջերմամիզութիւնը մաս կը
կազմին այն համաճարակներուն, որոնք բանակներուն
մէջ կը ծաւալին, հոգ չէ թէ տեղ մը յառաջիսազան
կամ հանգչին բանակները: Իրերու այդ վիճակը կը բա-
ցատրուի ֆիզիքական, բարոյական և անբարոյական

բազմաթիւ ու ծանօթ պատճառներով, զոր հարկ չկաց անգամ մըն ալ յիշեցնելու:

Նախազգուշական միջոցներու խնդիրը յուզուած է միշտ, մինչեւ ո՛ր աստիճան ապահովելու, թոյլատարելու կամ զսպելու է սեռապին բնազգի արտայայտութիւնները, որոնք պարագաներուն համեմատ կը սաստկանան զինուորներուն մէջ, իրենց տարիքէն ու անմեղադրելի առնականութենէն մղուած:

Փամանակին, բարքերուն և բանակի պետին խառնուածքին համաձայն, խնդրին լուծումը կը տարբերի: Առնասարակ կարելի է ըսել թէ մինչեւ ժԷ. դարուն վերջերը սովորութիւն դարձած էր ցնծուհիները թոյլատարել որ բանակներուն ընկերանան և նոյնիսկ իրենց բնակութիւնը հաստատել զինուորներուն մօտ, պաշտօնական հակողութեան տակ: Կարդ մը իրողութիւններ պատմական դարձած են. ցոփուհիներու անթիւ կարաւաններ Շարլ Բ. Փ բանակներուն հետեւեցան մինչեւ Նարօլի, ուր Ֆրանսացիները, Իտալացիները ու Սպանիացիները այնքան տարածեցին ֆրանկախոր որ կարծուեցաւ թէ հոն ծագում առած էր այդ հիւանդութիւնը: Նոյնպէս անհամար թուով պոսնիկներ կը զտնուէին Պուրկօնների գուշսերուն համայած բանակներուն մէջ: Կրանսօնէն յետոյ Զուիցերիացի պարզամիտ ու զգաստ լեռնականները սոսկումով խոյս տուին իրենց համար նորատեսակ ացգ կնոջական բանակին առցեւէն: Յիշելու պէտք չկայ Խապըլէի հանրածանօթ էջերը և ժանն տ' Սրբի նիզակով յարձակումը ցոփուհիներուն վրայ՝ Բանուէրի պաշարման ատեն: Ուրիշ իրողութիւն մը առաջ բերենք: Վալէնսօթայնի օրակարգը կը հաստատէ թէ 15,000 կիներ կային իր բանակին շարքը, և կեսարի հեղինակութեան վրայ հիմուելու

կը հաւասարէր թէ ամենէն կարիճ զինուորները ամենէն աւելի ցոփակեաց կ'ըլլան: Դուքս տ' Ալպ չէր ուզեր Ֆլանտրի պատերազմին երթալ առանց 800 հետեւակ կիներու և 400 հեծեալ կիներու, զոր անհրաժեշտ կը նկատէր իր զինուորներուն համար: Կան նմանօրինակ ուրիշ շատ մը իրողութիւններ, զոր կարելի է յիշել իրը հետաքրքրական դէպք: Որովհեաւ անոնք կը նույիրագործեն իրերու ընդունուած վիճակ մը:

Ինչպէս յայանի է, հիմա տարբեր ըմբռնում մը կը տիրէ: Կանոնադրական ոգին, 1791ի սահմանադրութիւնն բխած, ամբողջ ԺԹ. դարուն տիրապետած է այդ յասնաւոր գետնին վրայ: Ֆրանսացի պետերը ժամանակին սկզբունքներուն և պահանջներուն համաձայն ընդհանուր միջոցներ ձեռք առած են, որով խստիւ արգիլուած է պաշտօնական կաւատութիւնը:

Ինձի շահնեկան թուեցաւ հասկնալ այդ կանոնադրութեան արդիւնքը: Միզարանութեան զանազան ձիւղերուն մէջ ծառայելէ յետոյ՝ բանակին մէջ վեներական հիւանդութիւններու կիզրոն մը պաշտօն ստանձնեցի, ուրիշ քանի մը հարիւր հիւանդներ անցած էին, գրեթէ ամենքն ալ նոր վարակուած: Այդ պարագային չնորհիւ կրցի աեղեկութիւն ստանալ այդ զինուորներու հիւանդութեանց սեռային ծագումին, զանոնք վարակող կիներու գասակարգին, վարակուած արջաններու մասին, զգուշաւոր հարցաքննութիւն մը կատարելով, բան մը որուն վարժուած էի իմ քաղաքային պաշտօնիս բերումով:

Իմ կարծիքովս, այդ հետազօտութիւնն է որ հիմք կը կազմէ բոլոր նախազգուշական միջոցներուն, որովհետեւ անհրաժեշտ է ո և է համաձարակի համար հասկնալ թէ ուր է չարիքը, եթէ կ'ուզուի անոր ա-

առջքը առնել : Յաճախ զանց առնուած է այդ բանը և կամ թէ պարզ վիճակագրութիւն մը պատրաստուած է , մինչդեռ կանոնները վարելու և անոնց առաջ բերած արդիւնքները հակակշռելու է :

Այդ հետազօտութիւններուն արդիւնքը պարզած էմ 1916 ապրիլին Զ . բանակին բժշկական ընդհանուր քննչին յղած մէկ տեղեկագրիո մէջ : Էական կէտերը առաջ պիտի բերեմ , երկու մասերու բաժնելով զանոնք . վեներական հիւանդութեանց ծազումը բանակներուն մէջ և հետեւանքները նախազգույնութեան տեսակէտով :

1. Գեներական հիւանդութեանց ծազումը . — 1916 փետրուար 1էն մինչեւ մայիս 1 իմ գտնուած զինուուրական հիւանդանոցէս անցած են 580 հիւանդներ և հարիւրի չափ ալ բժշկական խորհրդակցութիւններ կատարուած են : Ատոնց մէջէն 340ը վեներական ախտէ բանուած են : Բացի անորոշ պատասխան տուողներէն , 291 հիւանդներու մասին կատարած քննութեանս վրայ վստահորէն կը լուսամ հիմուիլ : Այն քընութիւնն ալ , զոր կը շարունակեմ , իմ եղրակացութիւններս կը հաստատէ , ինչ որ քիչ յետոյ առաջ պիտի բերեմ :

Զանց կ'ընեմ առաջին դասակարգութիւնը այն կեզրոններուն , ուր այդ զինուուրները վարակուած էին : Տեղացիներուն միայն հետաքրքրութիւն կը պատճառէ : Քիչ մը յետոյ առաջ բերելիք վիճակացուցուերկու բաժանում միայն կը պարունակէ . ներքնաշխարհ և բանակներու շրջանակ : Վարակող կնոջ դասակարգն ալ նշանակած եմ հիւանդութեան տեսակին հետ , ինչպէս ջերմամիզութիւն ու ֆրանկախտ . ատոնց մէջէն տասերկուքի չափ հիւանդներ չարկեղ (շանքը

մու) ունեին : Առաջին դասակարգին (օրինաւոր կիներ) մէջ կը գտնուին այն կիները , որոնք իրենց օրինաւոր ամուսիններուն փոխանցած են հիւանդութիւնը՝ զինուուրական արձակուրդի մը միջոցին : Երկրորդ դասակարգին (ամուսնացած կիներ) մէջ կան բոլոր այն կիները , որոնք իրենց ընկերացին կանոնաւոր դիրքին պատճառով ոստիկանական հսկողութենէ զերծ են , թէեւ կամկածելի բլան : Այդ դասակարգին մէջ կը գտնուին իսանութան , ագարակատպան , միջակորեարու սեփականատէր կիներ :

Ահա՝ արդիւնքը այդ քննութեան .

ԴԱՍԱԿԱՐԳ	ԲԱՆԱԿՆԵՐՈՒ ՇՐՋ.		ՆԵՐՔՆԱՇԽԱՎԸ		
	ԶԼՐՄ.	ՖՐԵԿ.	ԶԼՐՄ.	ՖՐԵԿ.	ՀԱՄՔ.
Օրինաւոր կիներ	1	—	7	4	12
Ամուսնացած կիներ (միջակորեար և ագարակատպան)	24	7	7	5	43
Գործարուհիներ	8	6	5	5	24
Սպասուհի և խոհարարուհիներ	3	2	5	3	13
Ագարակի աղջիկներ	8	7	2	—	17
Զբոսարանի աղջիկներ	7	5	6	15	33
Տան կիներ	10	7	40	21	78
Հանրակիներ (արձանագրուած կամ գաղտնի :)	14	4	40	13	71
	75	38	112	66	291

Այս զիհակացոցէն շահեկան հետեւութիւններ
կընանք համել :

1. իսկոյն մատնանշենք որ այդ հիւանդներուն
մեծ մասը, այսինքն հարիւրին վաթսունը, վարակուած
է ներքնաշխարհին մէջ, զինուորական վարժութեան
քշանի ատեն, զօրակայանի մէջ գտնուած միջոցին,
և կամ, ինչ որ ամենէն յաճախաղէան է, զինուորա-
կան արձակուրդի շրջանին : Սակայն իմ հիւանդանոցս
հակատէն կամ կայաններու շրջանակէն եկող հիւանդ-
ներ միայն կ'ընդունէր, հետեւաբար բացառութիւն կազ-
մուու էին այն հիւանդութիւնները, որոնց ծագումը
ներքնաշխարհին մէջ պէտք է փնտոել, մինչեւ մե-
ծամասնութիւն կը ձեւացնէին : Այս նշանակալից իրու-
գութեան չնորհիւ պիտի կընամ քննութիւն մը կատա-
րել ներքնաշխարհին մէջ, նախազգուշական թելադ-
րութիւններ ընելու համար :

2. Արհեստով ցոփունիներուն, այն է զրօսարանի
աղջիններուն, արձանազրուած, գաղանի կամ հանրա-
տան մէջ գտնուող պոռնիկներուն համեմատութիւնը
աչքի կը զարնէ : Եաւս որ թուով շատ է և յետոց
կամ իւաստեսուած է : Բայց պէտք է զիտել որ այդ հա-
մեմատութիւնը բոլորովին կը տարբերի բանակներու
շրջանակին և ներքնաշխարհին մէջ : Մինչ առաջնին
մէջ 113 վարակուածներէն 47ը, այսինքն 100ին 41ը
կը պատկանին վերը յիշուած ցոփունիներուն, ներք-
նաշխարհին մէջ 178 վարակուածներուն 135ը վարակուած
էն, այսինքն 100ին 70 : Զբոսարանի աղջիններէն ա-
ռոնք հաշիւին մէջ զրած եմ, որոնց սովորական պոռ-
նուութիւնը ապացուցուած էր և զինետան յետաս-
մասին մէջ զործ կը զրուէր բացայացորէն, ինչ որ
ոստիկանական հետապնդումի առարկայ կրնայ դառնալ:

3. Սովորական համեմատութիւնը կը պահեն սպա-
սուիններն ու գործաւորունինները՝ երկու շրջանակնե-
րուն մէջ ալ, միայն դաշտերու ցոփունինները աւելի
մեծ թիւ մը կը ներկայացնեն ճակատին յարակից շրջ-
անակին մէջ :

4. Ծատերու համար թերեւու անակնկալ մը ըլ-
լայ, սակայն բացարձակապէս ստոյգ է որ ամուսնա-
ցած կիններու համեմատութիւնը շատ բարձր է, ատոնք
առանձին տուն ունին և առուք կը վճարեն, ատոնք
բանակներու շրջանակին մէջ է որ գերակշիռ թիւ մը
կը ներկայացնեն՝ բազդամամար արհեստով ցոփունի-
ներուն, 178 վարակուածներէն 12ը միայն ամուսնա-
ցած կիններ են ներքնաշխարհին մէջ, այսինքն 100ին
6.5ը, մինչ բանակներու շրջանակի 113 վարակուած
կիններէն 12ը միայն ամուսնացած են, այսինքն 100ին
27ը, ինչ որ զբոսարանի աղջիններուն և արհեստով ցո-
փունիններուն թիւին կը հաւատարի զրեթէ :

Թէեւ ցաւալի, բայց նոր իրազութիւն մը չէ, որով
տեղացի, բուն երկրացի տարբը, միջակորեար կին կամ
սպասուէի, պոռնիկութեան սահմաններուն մէջ ոտն-
ձգութիւն ըրած է : Ատիկա աղետալի հետեւանքն է
բանակի շրջանակին :

Դարերէ ի վեր, ամէն անդամ որ քաղաքալին կամ
զինուորական իշխանութիւնը ուզած է արգելք ըլլալ
հակազութեան ենթակայ պոռնիկութեան, նոյն համե-
մատութեամբ իսկոյն աւելցած է գաղանի պոռնիկու-
թիւնը (այս բառը առնելով իր լայնագոյն իմաստին
մէջ) : Այս իրոզութիւնը կը կատարուի այնպիսի կա-
նոնաւորութեամբ մը որ պատմութիւնը կ'ապացու-
ցանէ : Զապողական շատ մը հրամանաւզիրներ հրատա-
րակուած, բայց ամենքն ալ ետ առնուած են միշտ,

ինչպէս 1637ին՝ Լուի ԺԴ.ի օրով, 1684ին՝ Լուի ԺԴ.ի օրով, նոյնպէս 1650ին՝ Ֆրանսայի, ու 1885ին՝ Անդրամազոյ մէջ։ Բանակներու մասին ամէն մարդ կը յիշէ Ս. Օկիստթէնի սա խօսքը, որ միշտ առաջ կը բերեն հակողութեան կուսակիցները։ «Հանրատուները կոյուղներու կը նմանին։ Էն չքեղ պալատներուն մէջ անհրաժեշտ են անոնք՝ հանրային առողջութիւնը պահպանելու համար»։

Վերոյիշեալ թիւերէն կ'եզրակացնենք որ արհեստով ցոփունիներուն զործունէութիւնը հետզհետէ կը նուազի, որքան յառաջանանք զօրակայքերու շրջանակին մէջ, իսկ զրիթէ բոլորովին կ'անհետանայ ձականին վրայ։ Իրը զուգագիտութիւն, ու թերեւս իրը հետեւանք, ամէն զասակարգի պատկանող տեղացի տարրը տակաւ կ'անցնի արհեստով ցոփութիւն ընող տարրին տեղ, վեներական ախտերու տեւականացման նպաստելով բանակներու չրջանակին մէջ։ Այսպէս նախազգուշութեան զործը չի գիւրանար. ատոր արդիւնքներն ու դժուարութիւնները ցոյց պիտի տամ հիմա։

2. Զինուորական ու բաղայային նախազգուշուրիւմ։ — Յաւակնութիւնը չունիմ իր ամբողջութեան մէջ նկատի ամնելու սայն իմնդիրը, որ այնքան ընդարձակ է ու այս համեստ աշխատասիրութեան սահմանէն դուրս է։ Սակայն կ'ուզեմ մատնանշել ձեռք աւնուած ընդհանուր միջոցները, ու վերոյիշեալ թիւերուն չնորհիւ հետազոտել կանխարդել արդիւնքները թէ՛ բանակներու շրջանակին և թէ ներքնաշխարհին մէջ։ Ֆրանշ Կախտի ու Ժերմամիզութեան վրայ պիտի խօսինք միենոյն տաեն, քանի որ այդ երկու հիւանդութիւններու նախազգուշական միջոցները իրարմէ անբաժան են զինուորական ու քաղաքային տեսակէտով։

Ա. Բանակներու շրջանակին մէջ։ — Բանակներու առողջապահական բարձրաստիճան պետեր հարկ եղած հրահանգները հաղարդեցին զօրանոցներուն։ 1916 յունուար 5ի նախարարական շրջաբերականին համաձայն, որ ի վեր կը հանէ վեներական հիանդութիւններու վտանգը և կը չատագովէ դարձանները։ Այդ հրահանգները կատարեալ ու համանման, ստորև տապաջ պիտի բերեմ։

Այդ հրահանգներէն ոմանք ուղղուած են անհատներու, իսկ ուրիշներ կը խօսին վարչական միջոցներու վրայ՝ քաղաքային իշխանութիւններու մասնակցութեամբ։

1. Անհատական նախազգուշուրիւն։ — Նախազգուշութեան երկու կերպ կայ. մէկը լրր խորհուրդ կը տրուի ու միւսը իրը հրաման կը զործադրուի։ Առաջին կերպին մէջ կը գտնուին անհատական խորհուրդները և հրապարակային զատախօսութիւնները վեներական հիւանդութիւններու վտանգին ու ինքնապաշտպանութեան զանազան միջոցներուն վրայ, ինչպէս պահպանակ զործածել, ձարպու նիւթեր քսել, օճառով լուսցում ընել և առողջապահիկ միջոցներ ձեռք առնել, ուրիշի ծխափողը և սկզբանի սպասները չկործածել։ Մասնաւորապէս ծանրանալու է գաղտնի պունկութեան վտանգներուն վրայ, խորհուրդ տալով որ անհրաժեշտ է բժշկական քննութեան ենթարկուիլ, երբ կասկածելի յարաբերութիւն մը ունեցած է ենթական, և անմիջապէս գարմանուիլ։

Երկրորդ կերպին մէջ կան տմիսը երկու անգամ բժշկական քննութեան ենթարկել վիճուրները, առանձնապէս, ու երբ հնար ըլլայ, յանկարծակի ունենալ բժշկ, գաղտնի քարնէ և պատմել այն զինուորը

որ իր հիւանդութիւնը կը ծածկէ : Արձակուրդ ստացողներուն քննութիւնը՝ մեկնած ատեննին, արձակուրդի մերժում՝ մինչեւ որ գարմանուի վարակիչ եղող ախտաւոր վիճակը . նոյն քժշկական քննութիւնը արձակուրդէ վերագարձին : Այս վերջինները զարձիալ քննել վեց ու քառասուն օր յետոյ : Նմանօրինակ քըննութեան մը ենթարկել օդնական զինուորները և ամէն նորեկ : Անմիջական զարման և հիւանդ զինուորներու առաջում բանակներու շրջանակին մասնաւոր հիւանդանոցները և ուժգին գարմանում : Առանց արտօնութեան ճակատ վերագարձ՝ բուժուելէ յետոյ :

2. Վարչական նախազգուրին .— Հիւանդ զինուորը պէտք է իմացնէ թէ ո՞վ է զինքը վարակող անձը, որպէսզի այս վերջինը տեղական սստիկանութեան յանձնուի բժիշկին քօնթրօլին տակ, որ ախտածանաչութիւնը պիտի ընէ : Վիճակացոյցը զրկուելու է հրամանատարին, ու բժիշկը պահանջելու է որ զինուորներուն թոյլ չարուի յաճախել բոլոր այն հաստատութիւնները, ուր պոմակութիւն զործ կը գրուի . ի հարկին՝ քաղաքին ամբողջ մէկ թաղը արգելքի տակ առնելու է :

Քննութիւն կատարող բժիշկներուն հետ համաձայնելու է, որպէսզի հակառակութիւն կատարուի, հիւանդ կիները զարմանուին և ոչ թէ վտարուին, բուժուելէն յետոյ միայն հեռացուելով հիւանդանոցն : Բժիշկները համաձայնելու են հանրային բարոյականի սստիկանութեան հետ, երեւան հանելու համար այն տեղերը, ուր գաղտնի պոմակութիւն կ'ըլլայ :

Երջարերականին սա տողերը նոյնութեամբ առաջ կը բերեմ . «Զեր ջանքերուն օժանդակող քաղաքային իշխանութեանց անհրաժեշտ է հասկցնել թէ» Ա. իր

մարմինը շահագործող ամէն կին պէտք է մացնել հանրակիներու այն դասակարգին մէջ, որ հսկողութեան ենթարկուած է : Բ. երեւան հանել գաղտնի պոտնկութիւնը, զլխաւորաբար գինեառուններու, օթէլներուն, եւն ի մէջ :

Ասոնք են գրեթէ բոլոր այն միջոցները, զոր զործ զնելու հրաման արուած է ամէն բանակներու մէջ : Հարկ եղած հեղինակութիւնը չունիմ զանոնք զնահանակու համար, բայց պէտք է խօստավանիլ որ անոնց ամբողջութիւնը կը ձեւացնէ նախազդուչութեան կատարեալ օրինագիրք մը, խղճմաօրէն պատրաստուած և պարագաներուն յարմարցուած : Ասանկ փափուկ ինզրի մը մէջ հաւանական է որ զեղեւումներ ըլլան զործադրութեան մասին, բայց պէտք է խօստավանիլ որ ձեռք բերուած ամբողջական արգիւնքը հիանալի է, նայնիսկ թերի զործադրութեամբ :

Վեներական հիւանդութիւնները աւելցած են բանակներու շրջանակին մէջ . կանխատեսուած ու անխուսափելի էր ատ, բայց ոչ այն համեմատութեամբ, զոր ցոյց կուտան կարգ մը մասնագէտ զրադներու և զգայցունց յօդուածներու նեղութիւն կրող լրազրոշներու լաղկան հրատարակութիւնները : Յանձնամուզովովները տեղեկագիրներ պատրաստած են, ու գիտական ընկերութիւնները վիճարանած են անոնց վրայ . իսկ մարդասէրներու կողմէ հիմնուած կաճառներու մէջ անդամ մը եւս պարզած են ֆրանկախտի գարմանումը : Այս ամէնուն ըսելիք չկայ : Բայց յետոյ նշանած են որ չարիքը ըստուածին չափ տարածուած չէ : Աչքով տեսնողները կը հաւաստեն թէ իրականութիւնը չէ հասած այդ համեմատութեան, ինչպէս կը վախցուէր սկզբան, նկատի ունենալով մարդկային այդքան մէծ

համախոնութիւներ, ընդգարձակ շրջանակներ և առնական ուժերու այդքան մեծ տեղափոխութիւն։ Միջին զարուն տիրող ֆրանկախոտի համաձարակները չեն վերըսկսած, նոյնպէս չկան թիֆիւս, ժամտախտ ու քօղերա, հակառակ պատերազմի առաջին ամիսներուն մէջ եղած չարաշուք գուշակութիւնց։

Չեսք առնուած միջոցներէն ոմանք ուղղակի զինուորներուն վրայ կործ կը գրուին զինուարական բժիշկներուն կողմէ, ուրիշ միջոցներու համար պէտք կայ քաղաքային իշխանութիւններու մասնակցութեան։ Կարծեմ թէ առաջին միջոցները կարելի եղածին չափ գործադրուած են զօրագունդերուն, շարժուն հիւանդանոցներուն, նորակազմ վաշտերուն մէջ, թէ՛ իր նախազգուշութիւն և թէ իր գարման։ Արդիւնքները փոփոխական կ'ըլլան իւրաքանչիւր բժիշկի գործունելութեան և մասնաւոր ծանօթութիւններուն, բանակեներու շարժման ու հանգիստի շրջաններուն համեմտու։ Կարելի է բսել թէ տրուած պատուէլները տոհասարակ գործադրուած են, ու նախազգուշութեան գործին մէջ անոնց բերած մասնակցութեան բաժինը անվիճելի է։ Գիտի փափառքի որ պահպանակին կամ անգլիտեկան քարօթին գործածութիւնը աւելի ընդհանրանար, և այդ մաշկէ փոքր գործին աւելի շատ արուել ամենուն, թէ՛ երիտասարդ անփոյթ զինուորներուն և թէ տարիքոտ զինուորներուն, որոնք զարմանք կը յայտնեն իրենց վարակութինն համար։ Ֆրանկախոտի դէմ ազգու եղող պահպանակի գործածութիւնը լաւագոյն և ծշմարտապէս իրական միակ զգուշութիւնն է ներմամիգութեան դէմ, ինչպէս ասկէ առաջ ըստ եմ արդէն։

Միւս պատուէրները շատ աւելի կնճռոտ են, ու-

ըովհետեւ քաղաքային իշխանութեան գործակցութիւնը անհրաժեշտ է, նկողութիւն ու պատիժ սահմաննելու համար։ Ճակատին մերձակայ գիւղերուն մէջ կատարեալ խոտութեամբ գործազրուած են այդ միջոցները։ Այդ գործազրութիւնը հնարաւոր էր նախանոր համար որ բանակներու շրջանակին մէջ պաշարման վիճակի (1849ի օրէնք) բէժիմ կը տիրեր և զինուորական քօնթրուլ առանց գժուարութեան կը կատարուէր, յետոյ անոր համար որ զիւղերու մէջ կաւկածելի անձերը սահմանափակ թուով ըլլալուն վարակումներու ծագութը աւելի գիւրաւ երեւան կը համուի։ Նախազգուշական պատուէրներու կատարեալ գործազրութեան համար անհրաժեշտ եղող այդ կրկնա պայմանները գոյութիւն չունին զինուորական կայան և զող կեզրուններու մէջ։ Բացի վարակումի շատ մը առիթներէ և պարակելու գիւրութենէն, յաճախ կը պատահի որ այդ կեզրոններուն մէջ գտնուին ներքնաշխարհէն կախում ունեցող զօրագունդեր ու նորակազմ վաշտեր։ Հետեւաբար անոնք ևնթակայ են խաղաղութեան շրջանի օրէնքներուն, իսկ գործադրութեան մասին՝ միեւնոյն գժուարութիւններուն կը մատնուին, որոնց վրայ քանի մը խօսք պիտի ընեմ։

2. Ներնաշխարհի շրջաններուն մէջ։—Բնաւ մաազրութիւն չունիմ խօսելու վեներական հիւանդութիւններու դէմ եղած նախազգուշութեան վրայ, որով հարիւր տարիէ ի վեր կը զբաղին խորհրդակցական ժողովները, առանց լուծած ըլլալու զայն։ Ժամանակի գաղափարներու և մարդոց ազգեցութեան համեմատ՝ օրէնքը տարուրերած է պոռնկութիւնը չնչելուն կամ կանոնաւորելուն միջեւ, այսպէս՝ օրէնքը իր փոփոկականութեամբ յանգած է այնպիսի ամբողջութեան

մը ,ուր կամայական ու անկապ իրողութիւններ իրաւրու հետ կը մրցին : Աստիճանապետ Լընուարի 1778ի հին օրէնքէն մինչեւ 1884ի թաղապետական օրէնքը ոչ մէկ բան օրինաւոր շրջայեր արդի գրութիւնը ,որ հիմնուած է ոստիկանութեան ինքնազլուխ իշխանութեան վրայ : Փոփոխութիւններու մասին եղած ամէն փորձ արդիւնքի մը չէ յանգած սկիզբէն մինչեւ Օկանսէօր-Պուլօյի տեղեկագիրը :

Փախանակ իրողութեանց ամսուր գեռնին վրաց հիմնելու իրենց վիճաբանութիւնները , ընդդիմուունները իրարու վրայ յարձակած են անման սկզբունքներու անունով , ոմանք իբր պաշտպան հանրային բարոյականի , իսկ ուրիշներ իբր ջատագով անհատական ազտութեան : Պարզապէս միջոցներ ձեռք առնելու էր փոխանցիկ հիւանդութեան մը գէմ , ինչպէս կ'ընեն շառատենդի , կեղծմաշկի , թոքախտի , եւլիք դէմ , առանց խորհնելու ամէն վայրկեան թէ հիւանդներու արժանապատութիւնը վիրաւորուած ըլլար , բռնադատելով որ ինքնին ընին դարմանեն :

Եղան կառավարիչներ , որոնք 1849ի տարրամ օրէնքին պաշտպանութեան տակ , պաշտրման վիճակի յատուկ որոշումներ տուին , որոնց գործադրութիւնը անհրաժեշտ դարձած է պօսնելութիւնը շատ տարածուած ըլլալուն : Այսպէս , ԺԴ . շրջանակին մէջ , 1914 դեկտեմբեր 10ին հրատարակուած որոշմանգիր մը կ'ըսէ :

“Հանրակիններուն արգիլուած է կենալ զօրանողներու և դին . հաստատութեանց մերձակայ փողոցներուն մէջ : Պէտք է վտարուի ամէն կին որ սովորաբար պոռանկութիւն կ'ընէ ու քաղաքին մէջ որոշ բնակարան մը չունի : Բայոր հանրակինները պարտաւոր են բժշկական քննութեան ենթարկուիլ : Վարակուածները պարտաւոր են ինքիններին դարմանել տալու հիւանդ սնոցնե-

րու մէջ՝ մինչեւ որ բուժուին : Առօղջապահական իշխանութիւնը պարտաւոր է փնտուելու վարակուածները ու քօնթրոլ ընելու : Վերջապէս կարգապահական պատիժներ տալու է այն պոռնիիներուն , որոնք կը փորձնեն անսաստել վերոյիշեալ կանոններուն . այդ պատիժները պիտի տնօրինուելին պոռնիկութեան ճիւղի ուստիկանական պաշտօնեալին կողմէ : Ամբաստանիւալ կինը պիտի լսուի յանձնաժողովի մը կողմէ՝ բաղկացած քաղաքականի ներկայացոցիչն , ոստիկանական քօմիսէրէ մը և մանագէտ բժիշկէ մը : ”

Սնտարակոյս , օրինական տեսակէտով , վերոյիշեալ որոշմանպրին բոլոր յօդուածները անպաշտպանելի են , մանաւանդ վերջինը բոլորովին ապօրինի է , քանի որ զատական իրաւասութիւն կ'ընծայէ այնպիսի անձի մը , որ այցպիսի պաշտօն մը չունի : Բայց ասիկա արգելք մը չէ որ այդ որոշմանպրը լաւագոյն արշիւնքներ տուած չըլլայ : Զմոռնանք որ ներկայ պարագաներուն մէջ իրաւունք ու ատեն չունինք դժուարանձ ըլլալու միջացներու ընտրութեան վրայ , որոնց եթէ ոչ օրինաւորութիւնը , գէթ պէտքը կը խստովանին էն մարդասէրները : Ցաւալի է որ պաշտրման վիճակի բարձումով , այդ պատուէրներուն մէծ մասը չգործադրուիր : Զմոռնանք որ ֆրանսական զինուորներուն 100ին 60ը ներքնաշխարհի մէջ վարակուած են :

Կը մազթենք որ փոխանակ բխւանդական հակածառութիւններով ատեն կօրսնցնելու , անկեղծօրէն նկատի առնեն այդ խնդրին շատ մը գժուարութիւնները , ինչպէս օրէնքներ դրած են կաւատութեան ու անշափանամներու պաշտպանութեան համար :

Ահա թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնուելու են . Քաղաքային ու պատժական պատասխանատուութիւն վեներական վարակումներու մասին : Կիները զիսէ հանզներու գէմ օրէնքներ և ոստիկանական միջոցներու խստացում՝ բարեկարգութիւնը պահպանելու համար

փողոցներու մէջ։ Աստիկանական իշխանութեան չյանձնել գատական գործը, որը պէտք է կատարէ կանոնաւորապէս կազմուած զատարան մը։ Պոռնիկներուն լայնօրէն տրամադրել մասնաւոր բօլիքինիքները՝ զարմանական արդի բոլոր կատարելապործութիւններով ռժառուած, ինչ որ ամհրաժեշտ է հիւանդութիւնը արագորէն անցընելու համար, իսկ հիւանդանոց զրկել հիւանդութիւնը կրկնողները և անկարգապահները։ Վերաբննութիւն հանրտկիններու սենեակ վարձողներու և զինետուններու վերաբերեալ օրէնքներու և կարգագրութեանց, ինչ որ մեծ կարեւորութիւն ունեցող խնդիր մըն է, առանց որու արդիսնք մը ձեռք չպիտի բերուի։ Բայց ընտրական խորհրդաւոր հաշիւներ արգելք կ'ըլլան որ լուծուի այդ խնդիրը։

Մէկ խօսքով՝ բժշկական, վարչական և գատական իշխանութիւններու սահմանը պէտք է ճշգուի որոշապէս, որպէսզի անոնցմէ իւրաքանչիւրը կարենայ օրինաւորապէս գործել ու գործակցիլ, առանց սամնձգութիւն ընելու մերձակայ գետիններու վրայ։

Երկար տարիներ յետոյ, երբ. այս ամէնը կատարուի, կը յուսամ լաւ մասնագէտ մը պիտի զբանուի, որ ձեզի յիշեցնէ թէ նախազգուշական ամէն միջոց անօգուտ է ջերմամիջութեան դէմ։ Որովհետեւ ոչինչ բանով մը երեւան չի գար, չառ գիւրաւ կը ծածկուի, այնպէս որ եթէ ուզենք արգելափակ բնել բոլոր կասկածելինները, պէտք է համախմբման բանակեալեր պատրաստել, որոնք նոյնիսկ անբաւական պիտի զան։

Աւտի կրկնն եղրակացութեան կը յանգիմ, մէկը գործնական, որ է. Կասկածի պարագային, այսինքն հաւրիւրին լ նեսուն լուցուն պահանջեցէք, պահպանակ գործածեցէք եւ վազիլին բնեցէք։ Միւս եղրակացութիւնը քարոյական է, որ է. Երե յերմանիզութենի կը վախինա, երիտասարդ տարիին մեջ անուսնացէք, ձեր կնոջ հաւատարիմ մնացէք ու շատ մը զաւակներ ունեցէք։

Ի՞նչ ՊԷՏՖ է ԸՆԵԼ ԿԱՍԿԱՇԵԼԻ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ՄԷԶ

Ուրեմն նախազգուշական այս պատուէրներուն անսացողները զե՞րծ պիտի մնան միշտ։ Չեմ համարձակիր հաւասարել այդ բանը։ Հակասակ ամէն նախազգուշութեան, երբեմն կը պատահի որ ձախորդ հոսումներ առաջ զան։ Ահա ինչո՞ւ կ'ուզեմ սկզբնական խորհուրդներ տալ անբախտներուն, որոնք եթէ հետեւին ըստծներուս, չառ չուս պիտի բուժուին։

Ջերմամիջութեան թեկնածունե՞ր, բժիշկին յայտնեցէք ձեր կասկածները՝ առաջին ախտանիշները երեւան գալուն պէս։ Մի՞ սպասէք որ առատ հոսում մը կամ յատկանչական ցաւեր հաստատեն ախտաճանաչութիւնը։ Իսկոյն զիմեցէ՞ք բժիշկին։ Եթէ սխալած էք, վրդովիչ կասկածի ժամեր չպիտի անցնէք և ոչ առ անօգուտ գարմանումի մը պիտի ենթարկուիք։ Հիւանդութիւնը հաստատուելու պարագային, զասական զարձած գեղերով պիտի կրնաք հինգ-վեց շաբաթէն բուժուիլ, եթէ երբեք կանխարգել զարմանումով չաղէկնաք տասնընմագ օրէն։ Բժիշկներս իրաւամբ կը խորհնաք թէ ինչո՞ւ ջերմամիջութենէ նոր բանուած անձեր այսքան քիչ թուով կը զիմեն մեղի։ Սա ստոյգ է որ չառ քիչ անգամ կը տեսնենք սուր ջերմամիջութիւն ունեցող անձեր իրենց հիւանդութեան սկիզբը։

Հիւանդներ և բժիշկներ պատասխանառուութիւն ունին իրերու այս վիճակին մէջ, որուն պատճանները մնատուել շահեկան պիտի ըլլար։

1. Ի՞նչ ԲՆԵԼՈՒ է ՀԻՒԱՆԴԻ—Ցածախ ջերմամիջութեան ենթական բժիշկին չի դիմեր, որովհետեւ չի գիտեր թէ որո՞նք են հիւանդութեան առաջին նշանները։ Լսած է որ սուր ցաւեր կը զզայ բռնուողը, եւլն։ Այդ պատանիշները մինչեւ որ բացայտաբերէն երեւան չզան, չի հաւատար որ ջերմամիջութենէ բռնուած է։ Կը խոս-

տովանիմ որ դժուար է կանխահաս ախտածանաչութիւն մը ընել, առա ինչո՛ւ կ'ուզեմ քանի մը ճզրիտ խորհուրդներ տալ:

Երբ կասկածելի զուգաւորութիւն մը ունենաք, քանի մը օր հսկեցէք ձեր միզանցքին վրայ: Անօգուտ է երկու ժամը անդամ մը քաշքրտել ձեր առնանդամը, ինչ որ միզանցքի զրգուում առաջ պիտի ըերէ: Եթէ երբեք առառ մը ասդնտի ձեր միզաքերանը, քիչ մը կարմրած ըլլայ ու փակչառուն, անկանոն խոնաւութիւն մը ունենայ, անմիջապէս միզեցէք. յետոյ հինգ-վեց ժամ մի՛ միզէք: Երլրորդ միզումէն առաջ, միզանցքէ խողովակը երկայնքին քաշկրտելով դասական մեթութին համաձայն, փնտուցէք շիթը: Զերմամիզութեան պարագային, այդ շիթը երեւան կուգայ ո՛չ թէ աստուն, այլ կէսորէն յետոյ, բաւական առատ ու գունաւոր: Բժիշկին դիմեցէք այն ատեն, որ իր մահրագէտով ախտածանաչութիւնը պիտի ընէ, ըստ այնմ դարմանելու համար:

Աւրիշ պատճառ մնն ալ կայ, որով ջերմամիզութենէ նոր բանուած անձերու մեծ մասը բժիշկին չի զիմեր: Անդիմազրելի մղումով մը՝ այդ կարգի հիւանդանը ըներ զեղագործին մօտ կ'երթան, լրազրի մը կամ հանոյակատար բարեկամի մը յանձնարարած զարմանը ընելու համար: Այս ընդհանրացած ձգտումը ծագում առած է երիտասարդին մէջ արմատացոծ սա զաղափարէն թէ ջերմամիզութիւնը աննշան ու փոքր միջադէպ մընէ: ան կը զիշանի քիչ մը զարմանել, պայմանաւ որ պարզ, արագ, ոչ-նեղացուցիչ ու ձրի ըլլայ այդ զարմանումը: Հիւանդութեան սկիզբը սիսթիմաթիք անհոգութեամբ դարմանուող ենթական քանի մը ամիս յետոյ քրոնիկ ջերմամիզութիւն մը կ'ունենայ ու ջղագար կը զառնայ:

Անտարակոյս, ջերմամիզութիւնը չդարմանելը գտանգաւոր է: իսկ գէշ գարմանելը ա՛լ աւելի վտանգաւոր է: որովհետեւ անբաւական կամ գէշ գարմանումները գրեթէ միշտ պատճառ կ'ըլլան քրոնիկ հո-

տումներու, արական և կնոջական բարդ հիւանդութեանց: Դժբախտաբար խօսակցութիւններու մէջ ալ սա թիւր զաղափարը կը պաշտպանեն թէ ջերմամիզութիւնը թեթեւ հիւանդութիւն մըն է: Սովորաբար, ձոխ խնջոյքներու վերջաւորութիւն ատեն երբ գլուխները տաքսան, հին յիշատակներ կը քրքրուին: Այդ պահուն է որ խօսք կը բացուի երբեմնի բազմաթիւ հոսումներու վրայ, ինչ որ ներկաները մաթիկ կ'ընեն ներողամիտ ժափառվ մը, կարծես թէ գիւղազնական շրջանի մը յաղթութեան նշանները ըլլան, և անոնց անձետացումին համար քիչ մը ցաւ կը զգան: Այդ խօսքերը վասակար կ'ըլլան երիտասարդներու ներկայութեանը, ու անոնք օրին մէջը պիտի զղան, երբ սաստիկ փամփչատատապը, թարախոտ գեղձատապը, միզարգելութիւնը կամ իրենց կիններուն արգանդատապերը նուազ հաճելի կերպով յիշեցնեն երբեմնի երջանիկ օրերը:

Միեւնոյն պատճառով անհրամեշտ է որ հիւանդները չընդունին զիրենք չքաղաքողներուն բարեկամական կամ շահախնդրական առաջարկները: Ամենէն վստահնի և փորձառու բարեկամը, որքան ալ լաւ զիտաւորութիւն ունենայ, շատ գէշ խորհուրդներ կրնայ առաջ Անհենք օրինակ մը: Ք... ինձի կը զիմէ հինգ-վեց շարթուան ջերմամիզութիւնը զարմանել առլու համար: հականեխական կամ սեղմիչ ներարկումով մէկ քանի օրուան մէջ կը գազրիցնեմ հոսումը: Եր բարեկամին կ'այցելէ Փ..., որ կասկածելի հոսում մը ունի: Ք... ձմարիտ հաճոյք մը կը զգայ իր բարեկամին Փ... ի տալով իմ ներարկած հեղուկս, որ այնքան լաւ բուժած է զինքը: Կրտին վրայ քարիւդ թափելու կը նմանի: Փ... իրար անցած, վրաս վագեց, վասակար զեղագիրը ձեռքին մէջ ճօձելով: Քիչ մը գտուարութիւն քաշեցի, հասկցնելու համար թէ գեղերը և չափերը փոփոխական են րոպէին, ենթագլուխն, եւլնի համեմատ. լաւագոյն բարեկամն իսկ անկարող է զանազանելու այդ պարագաները:

Աւելի զօրաւոր պատճառներով՝ բնաւ կարեւորաւթիւն բնծացելու չէ լրագիրներու Դ. ող էջին մէջ եղած ձանուցումներուն ու թղթակցութեամբ գարմանոր խորհրդառներուն :

Նոյնիսկ բանաւոր գարմանումի մը սկսիլը ուրիշ անպատենութիւն մը ունի, եթէ նախապէս քննութիւն չէ կատարուած։ այս է երկար ատեն տարակոյսի մատնել թէ՛ բժիշկը և թէ հիւանդը։ Ենթագրենք որ առաջին կասկածելի ախտանիշերը երեւան գտուն պէս հիւանդը կարգ մը ներարկումներ կատարէ իր վրայ։ Ութը օր յետոյ ինձի կը գիմէ։ Գրեթէ չոր է միզանցքը և ներարկումներու արտազրած գորշ արտաթօրումները միայն կը գտննմ։ Սկիզբը երեւան եկած չիթը ի՞նչ է։ Զեմ կրնար հասկնալ նոյն իսկ մանրագէտով։ Ի՞նչ պիտի ըլլայ եթէ երրեք գաղրեցնեմ ներարկումները։ Թիրեւս նորէն պիտի սկսի հոսումը և կամ թէ բան մը չպիտի պատահի, եթէ հիւանդը ի զուր իրար անցած է։ Տարակոյսի մատնուած, քանի մը օր ալ չարունակել կուտամ ներարկումները, տակաւ անոնց թիւը նուազեցնելով, և ուշազիր հսկողութեան մը ենթարկելով։ Այդ ձգձգումներուն պէտք չպիտի մնար, եթէ սկիզբէն քննութիւն կատարուէր։

Ահաւասիկ հիւանդներուն պարտականութիւնները, որոնցմէ կը խուսափին շատ անգամ, ու փրկանքը կ'ըլլայ հինցած ջերմամիզութիւնը (կուր միջիրէ)։ Բայց պէտք է յիշել նաև հիւանդներուն իրաւունքները, ուրոնց համապատասխան պարտաւորութիւններ ունինք մնանք, բժիշկներս։

Ի՞նչ ընելին է Բժիշկի՝ Այդ պարտաւորութիւններուն մէջին ամենէն ստիպողական և ամենէն զգուարինն է հասկնալ թէ աւենուած անորոշ չիթը ջերմամիզութեան արգիւնք է թէ ուրիշ բան. բժիշկին առաջին և անհրաժեշտ գործը պէտք է ըլլայ արտաթօրուածը տարածել ապակիի վրայ ու ջերմամիզութեան միքրոպը վնասել դասական եղանակներով։ Զիրաւեր մէթիէնի կատարով, զունաւորում մը կատա-

րել. մէկ քանի զննութիւն անհրաժեշտ է, ինչպէս նաև զունաւորում կրամի մէթոսով։ Բջիջներու մէջ լողացող քանի մը անորոշ յօնիներով կամ սիրլօֆօներով գոհանալու չէ, եթէ թարախի գնդիկներ իսկ գտնուին։ Նատ մը սիսալներ եղած են, ինչ որ ինձի կը յիշեցնէ լըկրէնի գտած տասնըվեց տեսակի միքրոպէները ասող միզանցքին մէջ (Նանսիի թէղ, 1888)։ այդ միքրոպէներուն մէջն կարգ մը սիրլօֆօներ միայն ախտածին չեն։ Բանի մը տարիէ ի վեր, բազմաթիւ նոր աշխատասիրութիւններ հրատարակուեցան ջերմամիզութեան վրայ։ Զպիտի ջարմանայի, եթէ երբեք ջերմամիզութեան միքրոպի խնդիրը վերացնուէր քիչ ատենէն, հակառակ իր վճռական երեւոյթին։ Եթէ բժշկական քննութիւնը չի փարատիր ձեր կասկածը, ու մանրազիտական զննութիւնն ալ կը հաստատէ այդ կասկածը, այն տաեն նախրնարելի է սպասել քան թէ անօգուտ գարմանումի մը ենթարկել հիւանդը։

Խնդիրը շատ աւելի կը կնճռուի, երբ միզանցքի յօդպին և մորթային զրգութիւններ ալ երեւան զան։ Անձնապէս հաստատած չեմ այդ կնճռութիւնները։ Բայց կարգ մը հոսումներ գարմանած եմ, որոնք ինքնարեր երեւոյթ մը ունին։ Աւելի կատարեալ քննութիւնն մը և յաջորդական զննութիւններ ինձի սա համոզումը ներշնչած են թէ այդ հոսումները արդիւնք են միզանցքի ջերմութիւններու, վաղանցիկ վարակումներու, որոնք արեան համախռնումի ազգեցութեան առակ սուզ կուզան հինցած ջերմամիզութիւն ունեցողներուն մօտ, քանի որ այս վերջններուն զեղձերը վարակուած են տակաւին։ Այդ հոսումները բաւական առաս ըլլալուն՝ մէկ երկու օր ջերմամիզութիւն կը կարծուի։ Եօթը-ութը օրէն ապագինումը հանգիստի ազգեցութեան տակ՝ կ'ապացուցանէ թէ ախտածանչութիւնը սիսալ կատարուած է՝ մանրազիւտական գննութիւններու առթած կասկածին վրայ հիմնուերով։ Կարծուածէն շատ աւելի յաճախագէպ զարձած է այդ չփոթութիւնը, բան մը, որով կը բա-

ցատրուին իմ կարծիքովս՝ հրաշալի ու անակնկալ չառ
մը բուժումներ:

Ախտաճանաչութիւնը ընելէ յետոյ՝ կատարեալ
քննութեան մը պէտք կայ, որ իբր առաջնորդ պիտի
ծառայէ գարմանումի: Այս առթիւ բարեկամական խոր-
հուրդ մը տամ: Բժիշկները իրենց պատուէրներուն մէջ
պէտք չէ ցաւալի անտարբերութեամբ մը զարմանեն
ջերմամիզութիւնը, որ երևութափէս բաւական կնճռոտ
զիւրաւ կը ճանչցուի իր մեծ զիծերուն մէջ: Պատուա-
կան և փորձառու բժիշկներու զեղազիքները ունին ի-
րենց ձեռքին մէջ, թէեւ անոնց համար միջակ շանե-
կանութիւն մը ունի ջերմամիզութիւնը: ցաւալի է ըսել
որ բոլոր զեղազիքները իբարու կը նմանին: Ի՞նչ որ
ալ ըլլաց հիւանդութեան շրջանը, իր սասակութիւնը,
տեղափակումը, հիւանդին կուտան պասլամիք մը և
ներարկում մը կ'ընեն. գրեթէ միեւնոյն բաները միշտ.
Երբ ասսերկու հիւանդներ նշարեն այդ միօրինակ
զարմանումը, ի հարկէ իրենք անձամբ կ'ընեն այդ
զարմանումը, առանց դիմելու բժիշկին միջամտութեան:
Բրօֆէսօր Ֆինմէ 1894ին հրատարակած «Զերմամի-
զութիւնը» գործին մէջ հաստատած է այդպէս ըլլալը:
Երբ վերջաբան կը կրկնեմ անոր սա իմաստուն խոր-
հուրդները. «Եաւ մը կնանուուրիւններ առաջ կուրսե
դեղերին. այսպիս պիտի շարունակուի, եթէ սովորակնու-
րինը տիրե դարևանումին միջ: Բուժումը դիպուածի
զործ-պիտի ըլլայ եւ ոչ թէ բժիշկին զործ, որին ատեն
որ բժիշկը շերևանիզուրեան մն նոյնացն միզարեւանին
վրայ երեւան եկած բարախի շիր մը. որին ատեն որ
այդ շիրը տեսնելու պէս պատուիրէ այնին չատազով-
ուած ներարկումները կատարել: Ասոյդ ախտաճանայու-
րեան մը բացարձակ ցուցուենիներուն վրայ հիմնուած
ազգին ու բանաւոր դարևանումի մը միայն կարեի և
ապանովարաց նպատակին հասնի, պայմանով որ ան պա-
շանեցուի հիւանդուրեան և կարխական ու ախտաճա-
շերու սասկուրեան:

Ա. Յ. Պ. 2.



ԿԱՐԴԱՑԵՔ չի ձանձրանալու համար

Ներ ՔԱՐԹԻՑ, ամերիկացի նշանաւոր զաղոսնի ոստի-
կանին արկածները, հրապարակ կ'ելլէ այսօր 7րդ
թիւը: Գին 15 դրչ.:

ԱՄՓ ԲԻՆՔԼԹԸՆ, հոչակաւոր զաղոսնի ոստիկանին
յաջող արկածները, հրապարակ կ'ելլայ 14րդ
գիրքը: Գին 7.5 դրչ.:

ԱՐՍէՆ ԼԻԲԻՏԵ, ֆրանսացի նշանաւոր տօւներու ճէն-
թրլմէն կողոպտիչը, որուն հետաքրքրացարժ ար-
կածներուն Բ. գիրքը հրապարակ ելած է: Գին 10 դչ.
ՇէՐԼՈՅ ՀՈԼԼՄ, անգլիացի աշխարհանչակ զաղոսնի
ոստիկանին նոր և վերջին արկածներուն երկրորդ
գիրքը, մամուլի տակ: Գին 10 դրչ.:

ՄԻԲԼՕՊ, ֆրանսացի զրող նոսպէր ֆրանչվիլի կատա-
կերգութիւնը, 10 պատկերներով զարդարուած:
Գին 5 դրչ.:

ԼՈՒՍԱՆԿՈՐԸ, Գր. Սարաֆեանի Պոլուանայ իրտկան
կեսարէ նորավեպը: Գին 5 դրչ.:

ՄԻՋՆՈՐԴ ՏԵՐՊՈՎԱՆ, Եր. Օտեսնի վերջին հեղինու-
կութիւնը: Պրակը 5 դրչ.:

ԻԳՆԱՏ ԱՐԱՄ, փնտուել ամէն կողմ:

ԿԱՂՐՃԱԿԱՆԵՂ, ՅԱԿՈԲ ԱՐԲՈՀԱՅՄԵԱՆ, Պապը Ալ. Ռէ-
շիտ էֆ. խան:

Փնտուել նաև զրավաճառ ծխավաճառ և բոլոր լրա-
զրավաճառներէն:

ԽՈՏ ՕՐԵՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆԱԿ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԹԻՒ 2Ը

Ձերանկախակ զերծ մնալու միջոցներ

3203

Տօր. Կ. ՔԵՐԵՍԹԵՂԵԱՆ

Կը զբաղի վեճերային և մարտային հիւանդութիւններով
կը զննուի ամեն որ կեսոր պաց Գում Պարո, Զա-
րիգնան դեղաւաներ, իսկ կեսոր վեց Նոր Նամակաւան
կից Նիւզնիք Զիս դեղաւանին վերնայարկը՝ իր մաս-
նաւոր դաշնամուսունը:


Կը կրտսեր նուի արհան եւ մեզի մանութիւններ իր մաս-
նաւոր դաշնամուսունին մեց:



Տօր. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Մամազիս ներքին հիւանդութեանց

Կը զննուի ամեն որ կեսոր պաց Նոր Նամակաւան կից
Նիւզնիք Զիս դեղաւանին վերնայարկը՝ իր մասնաւոր
դաշնամուսունը, իսկ կեսոր վեց Պատրիարք, Եկեղիւ-
մանի, Պայիր վաղող, Բարս Խրիստո Առարքնանը; թիւ 39:



ԳԻՆ 20 ԴՐՈՒՅԵ

Խեղունական ՕԸՆԱԲ ԱԾԲԱՀԱՄԵԱՆ Պատը Ալի Ռէշ Խ. Խաչ

2013

«Ազգային գրադարան»



NL0074834

